Փախստականների հոսքով պայմանավորված
ճգնաժամային իրավիճակը ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

care

UN WOMEN

© 2024 ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն և CARE Կովկաս

Բոլոր իրավունքները պաշտպանված են։

Այս հրապարակման մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ ներկայացնեն ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության, CARE International-ի, Ծվեդիայի կառավարության կամ նրանց հետ փոխկապակցված կազմակերպությունների տեսակետները։

Ծապիկի նկարը՝ ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն|Անի Հովհաննիսյան

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանում փախստականների ճգնաժամի գենդերային վերլուծությունը» (մայիս, 2024թ.) համագործակցություն է CARE Կովկաս-ի և ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության միջև: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում առաջատար խորհրդատու Նվարդ Մանասյանին, որը նշանակալի դեր է ունեցել տվյալների վերլուծության և զեկույցի մշակման գործում: Խորապես շնորհակալ ենք նաև սույն հրապարակման վերջնականացման պատասխանատուներին՝ CARE-ի թիմից՝ Քեթի Քարթվելիշվիլիին ու Նինո Քարանաձեին, և ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության թիմից՝ Պիմպիսա Սրիպրասերտին:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել մեր աշխատասեր գործընկերներին՝ «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ին և Կանանց աջակցման կենտրոնին՝ դժվարին պայմաններում տվյալների հավաքագրման և հարցազրույցների անցկացման հսկայական աշխատանքն իրականացնելու համար:

Շնորհակալ ենք նաև Կովկասի և գլխամասային գրասենյակի CARE-ի թիմին՝ Սոֆյա Կամուշաձեին, Քեթևան Խաչիձեին և Լաուրա Թաշջյանին՝ սույն հետազոտությանն աջակցելու համար, ինչպես նաև ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության աշխատակից Ռեբեկա Ասին Ռիվերային՝ մանրամասն բովանդակային ու կառուցվածքային ուղղորդման և աջակցության համար:

Մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում նաև 249 կանանց և տղամարդկանց, որոնք մասնակցեցին ֆոկուս-խմբային քննարկումներին և փոխանցեցին տեղահանությունից հետո իրենց անձնական պատմություններն ու փորձառությունը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում պետական կառավարման մարմինների և ՀԿ-ների ութ ներկայացուցիչներին իրենց արժեքավոր ներդրումների համար, որոնք էական նշանակություն ունեցան այս զեկույցում ազդակիր տարբեր խմբեր ներկայացնող անձանց մասին մանրամասն տեղեկություններ ներկայացնելու հարցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ 5

ԱՄՓՈՓԱԳԻՐ 6

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

1.1 Նախնական տեղեկություն 8

1.2 Մեթոդաբանություն 9

1.3 ժողովրդագրական բնութագիր 11

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 13

2.1 Գենդերային դերեր և պարտականություններ 13

Աշխատանքի բաժանում 13

Եկամտի վաստակում 15

Որոշումների ընդունում 16

2.2 Ծառայությունների հասանելիություն 18

Ընդհանուր մարդասիրական օգնություն 18

Տեղեկատվություն 20

Բնակարանային խնդիր 22

Առողջապահական ծառայություններ 23

Հոգեկան առողջության ծառայություններ 24

Կրթություն 25

Դրամական օգնություն 25

2.3 Պաշտպանություն 26

Գենդերային բռնություն 26

Անվտանգություն 27

2.4 Հաղթահարման մեխանիզմներ 28

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 30

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 34

Հավելված Ա. Ֆոկուս-խմբային քննարկումներ 34

Հավելված Բ. Առանցքային տեղեկատուների ցանկ 37

ՀՂՈՒՄՆԵՐ 38

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

Արմստատ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ԳԲ	Գենդերային բռնություն
ԼԳԲՏՔԻ	Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քուիր և ինտերսեքս անձինք
ՀՈՒ	Հաշմանդամություն ունեցող
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
ՄԱԿ ՓԳՀ	ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
ՖԽՔ	Ֆոկուս-խմբային քննարկում

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանում փախստականների ճգնաժամի սույն Գենդերային վերլուծությունը բացահայտում է կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների բազմազան կարիքները, ռիսկերն ու կարողություններն իրենց ամբողջ գենդերային բազմազանությամբ, և ուսումնասիրում է գենդերային և ուժային հարաբերությունները փախստականների շրջանում: Այն նպատակ ունի տեղեկացնել և աջակցել մարդասիրական ու վերականգնողական ծրագրերին/արձագանքին՝ հասցեագրելու փախստականների անհապաղ և միջնաժամկետ կարիքները: Այն միաժամանակ ընդգծում է այն մարտահրավերները, որոնց բախվում են հետազոտության մասնակիցները՝ կարևոր տեղեկության, բնակարանային, առողջապահական, հոգեկան առողջության աջակցության, դրամական օգնության և աշխատանքի հասանելիության հարցում: Ստորև ներկայացված են վերլուծության առանցքային բացահայտումները:

Գենդերային դերերը և որոշումների ընդունումը

- Չնայած շարունակվող ճգնաժամին՝ փախստականների շրջանում պահպանվում են տնային տնտեսություններում աշխատանքի բաժանման ավանդական ակնկալիքները: Այդուհանդերձ, անհրաժեշտությունից ելնելով, կանայք էլ ավելի են ներգրավվում աշխատաշուկայում:

- Կանայք, ի լրումն որևէ վճարվող աշխատանքի, շարունակում են կատարել չվճարվող կենցաղային աշխատանքի մեծ մասը:

- Փախստական տղամարդիկ հաճախ սաստիկ ճնշման տակ են հայտնվում՝ կատարելու իրենցից ակնկալվող՝ ընտանիքի կերակրողի պարտականությունները: Նրանք նաև ստիպված են կրել աշխատանք գտնելու և ընտանիքին ապահովելու ծանր պատասխանատվությունը՝ սակավ աշխատանքային հնարավորությունների պայմաններում:

- Կանայք և տղամարդիկ զբաղվածության (եկամուտ վաստակելու) կարևորությունը համարում են առաջնահերթություն, սակայն տղամարդիկ եկամուտ ստեղծելը դիտարկում են նաև որպես իրենց գենդերային դերակատարման միջոց:

- Չնայած տնային տնտեսության որոշումներում կանայք ավելի կարևոր դեր են խաղում ֆինանսական ռեսուրսների և մարդասիրական օգնության բաշխման հարցերում՝ դա մեծապես ընտանիքի համար հոգացողի և տնտեսողի նրանց դերի շարունակությունն է, որպեսզի հնարավոր լինի բավարարել ընտանիքի կարիքները: Որոշումների ընդունման մոդելները բազմազան են, ինչը ներառում է որոշումների համատեղ ընդունումը, սակայն պահպանվում է որոշումների ընդունման մեջ տղամարդկանց գերակայության ավանդական ընկալումը:

Տեղեկությունների և ծառայությունների հասանելիություն

- Չնայած առցանց տեղեկատվական աղբյուրների աճող կարևորությանը՝ բանավոր խոսքը մնում է տեղեկատվության հիմնական աղբյուրը: Այնուամենայնիվ, տարիքային և սեռային դինամիկան ազդում է նախասիրությունների վրա, և երիտասարդ կանայք նախընտրում են սոցիալական ցանցերով ու հեռուստատեսությամբ տարածվող հայտարարություններից տեղեկություններ ստանալ:

- Անկախ այն հանգամանքից, որ ջանքեր են գործադրվում առողջապահական ծառայությունների բարելավման ուղղությամբ, հատկապես փախստականների համար պահպանվում են պետպատվերից դուրս բուժսպասարկման մատչելիության մարտահրավերները:

- Մեծ տարածում ունեն հոգեկան առողջության խնդիրները, հատկապես սթրեսը և

դեպրեսիան: Կանայք ավելի հաճախ են դիմում հոգեբանական աջակցության: Այդուհանդերձ այդ ծառայությունների մասին ցածր տեղեկացվածությունը և դրանց բարձր արժեքը խոչընդոտում են դրանց հասանելիությունը:

- Դրամական օգնության ուշացումներն ու բյուրոկրատական քաշքշուկը բացասաբար են անդրադառնում փախստականների կողմից իրենց կենսական կարիքները հոգալու, ինչպես օրինակ՝ բնակարանային և առողջական խնդիրները լուծելու կարողության վրա:

- Փախստականների բնակարանային կարիքների բավարարումը բոլորի բարեկեցությունն ու անվտանգությունն ապահովելու առանցքային գործոններից է: Կանանց համար լրացուցիչ մարտահրավերներ են բնակտարածքի բազմամարդությունը և անձնական տարածքի բացակայությունը:

- Կանայք ակտիվորեն փնտրում են մարդասիրական ծառայություններ՝ չնայած տեղեկատվական ու հասանելիության խոչընդոտներին առերեսվելուն:

- Զբաղվածության հնարավորությունների հասանելիությունն առաջնահերթ խնդիր է հատկապես տղամարդկանց շրջանում: Դեռևս առկա են հաղթահարման ենթակա մարտահրավերներ, այդ թվում՝ աշխատանքի տեղավորման մասնավոր կեղծ գործակալությունները և խտրականությունը, որին առավելապես բախվում են երիտասարդներն ու հաշմանդամություն ունեցող անձինք:

Պաշտպանություն

- Կարևոր է նշել, որ փախստական կանանց շրջանում նկատվում է գենդերային, հատկապես զուգընկերոջ բռնությունը քննարկելուց խուսափելու միտում: Սա մեծապես հետևանք է հայրիշխանական նորմերի:

- Որպես առանցքային մարտահրավերներ՝ շեշտվում են բնակարանային կարիքների և աշխատանքի տեղավորման հնարավորությունների դիմաց շահագործվելու ռիսկերը:

- Տղամարդիկ և կանայք հայտնել են, որ Հայաստանում իրենց ֆիզիկապես ապահով են զգում: Այդուհանդերձ, անվտանգությանն առնչվող ցանկացած մտահոգություն կապված է նրանց անծանոթ միջավայրի և կենսապայմանների հետ, որոնք նաև անդրադարձել են աշխատանքին, մարդասիրական օգնությանը և երեխաների կրթությանը վերաբերող նրանց որոշումների վրա:

Հաղթահարման մեխանիզմներ

- Հաղթահարման բացասական մեխանիզմները, հատկապես թմրամիջոցների չարաշահումը, աճող խնդիր են ճանաչվել տղամարդկանց և տղաների շրջանում: Այնուամենայնիվ, հարցվողները դրանք չեն համարել հաղթահարման մեխանիզմներ:

- Տարեցները հակում ունեն ավելի դանդաղ հարմարվելու, քան ավելի երիտասարդ սերունդները:

- Փախստականների կողմից կիրառվող հաղթահարման ամենատարածված մեխանիզմն իրենց խնայողությունները ծախսելն է:

- Փախստականների նախկին դժվարությունները, մասնավորապես 2022-23թթ. Լաչինի միջանցքի շրջափակումը, նրանց որոշ չափով նախապատրաստել էին զարգացնելու կենսամիջոցներին հարմարվելու կարողություններ, քանի որ սննդի և առաջնային կարիքներն ապահովելու համար ստիպված էին եղել խնայել ու տնտեսել:

- Փախստականների ֆիզիկական կենսապայմանները և հոգեկան առողջության վիճակը նրանց խանգարում են ներգրավվել և ինտեգրվել ընդունող համայնքին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նկարը՝ Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ

1.1 Նախնական տեղեկություն

Տասնամյակներ տևող հակամարտության վերջին սրացումից հետո՝ 2023թ. սեպտեմբերի 27-ին, Հայաստանը սկսեց ընդունել էթնիկ հայ փախստականներին: Երեք օրում գրանցվել է Սյունիքի մարզով ժամանած 100480 փախստական: Հոկտեմբերի վերջի դրությամբ ժամանողների թիվը հասել է 101848-ի, որոնք բոլորը մինչև նոյեմբերի 7-ը գրանցվել են Հայաստանի միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից: Այդ ժամանակ մոտ 55000 փախստական ապրում էր կառավարության տրամադրած կացարաններում:

ՄԱԿ ՓԳՀ-ի տվյալներով՝ փախստականների մեծ մասը Հայաստան է ժամանել նվազագույն անձնական իրերով՝ ունենալով օգնության, այդ թվում՝ ֆինանսական աջակցության, կացարանի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև բժշկական և հոգեբանական խնամքի հրատապ կարիք: 2023թ. հոկտեմբերի 9-ից 13-ը ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից անցկացված կարիքների նախնական արագ գնահատումը բացահայտեց, որ պարենային անվտանգությունը, կրթությունը, կացարանը, ոչ պարենային ապրանքները, պաշտպանությունը, առողջությունը և դիմադրողականությունն ապագայում աջակցություն պահանջող հիմնական ուղղություններն են:

Մինչև 2023թ. վերջ Հայաստանի կառավարությունն օպտիմալացրել էր փախստականներին տրամադրվող օժանդակությունը: Այն ներառում էր մեկ անձի հաշվով միանվագ 100000 ՀՀ դրամի (248 դոլարին համարժեք) փոխանցում, գումարած վեց ամսվա ընթացքում ամսական 40000 ՀՀ դրամ (99 դոլար)՝ բնակարանի վարձակալության և 10000 ՀՀ դրամ (24 դոլար)՝ կոմունալ վարձավճարների համար փոխան-

ցում (ի սկզբանե նախատեսված էր տրամադրել 2023թ. հոկտեմբերից մինչև 2024թ. մարտ, հետագայում երկարաձգվեց մինչև 2024թ. դեկտեմբեր)։ Դրամական օգնությունը պետք է տրամադրվեր Միասնական սոցիալական ծառայության 49 մարզային մասնաճյուղերի միջոցով։ Երկրորդ, ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող փախստականներն իրավունակ էին ստանալու կենսաթոշակ՝ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների միջոցով։ Հաջորդիվ, մեկուկես ամսում կենսաթոշակ և սոցիալական այլ նպաստներ ստացողների թիվը հասավ 10629-ի։ Երրորդ, նույն ժամանակահատվածում ավելի քան 5350 փախստական արդեն աշխատանք էր գտել տարբեր ոլորտներում։

Գենդերային վերլուծության նպատակները

այաստանում փախստականների ճգնաժամի գենդերային վերլուծությունն իրականացվել է ա) իրազեկելու և աջակցելու մարդասիրական և վերականգնողական արձագանքին՝ բավարարելու փախստական կանանց, երիտասարդների, երեխաների և տարեցների անհապաղ հրատապության կարիքները և բ) նպաստելու փախստականների միջնաժամկետ հրատապության կարիքների լուծմանն ուղղված ջանքերի համակարգմանը և շահերի պաշտպանությանը՝ տեղեկատվության, գործընկերների ներգրավման և գենդերային կարիքների գնահատման միջոցով։

Գենդերային վերլուծության **խնդիրները** հետևյալն են.

- Ուսումնասիրել բոլոր գենդերային ինքնությունների և տարբեր խմբերի ներկայացուցիչ կանանց, աղջիկների, տղամարդկանց և տղաների տարբեր կարիքները, ռիսկերը, հնարավորությունները և հաղթահարման ռազմավարությունները ճգնաժամի պայմաններում։

- Ուսումնասիրել, թե ինչպես են փոխվել (եթե փոխվել են) գենդերային դերերը, փոխհարաբերությունները և ուժային հարաբերությունները տնային տնտեսություններում։

- Վերհանել տարբեր խմբերի ներկայացուցիչ կանանց, տղամարդկանց, տղաների և աղջիկների կողմից հաղթահարման տարբեր ռազմավարությունները։

- Մշակել գործնական առաջարկություններ, որպեսզի արտակարգ իրավիճակների արձագանքման ժամանակ հաշվի առնվեն տարբեր խմբերի ներկայացուցիչ կանանց, տղամարդկանց, դեռահաս տղաների և աղջիկների ուրույն փորձառությունները՝ տրամադրելով հարմարեցված ծառայություններ և օժանդակություն՝ միաժամանակ երաշխավորելով «մի՛ վնասիր» սկզբունքը։

Վերլուծությունն առաջին հերթին ուղղված էր գենդերազգայուն ճգնաժամային արձագանքմանը և ծառայությունների մատուցմանը վերաբերող հիմնական բացերը հասկանալուն։ Այն նպատակ ուներ ուսումնասիրելու տարբեր խմբերի կարիքները, հաղթահարման ռազմավարությունները, հնարավորությունները և ձգտումները՝ թիրախային արձագանքման համար առաջարկություններ մշակելու նպատակով։

1.2 Մեթոդաբանություն

Գենդերային վերլուծությունն անց է կացվել **2023թ. դեկտեմբերի 1-ից 2024թ. հունվարի 10-ը:**

Հետազոտության մեթոդները ներառում էին հետևյալը.

- Տասնութ **ֆոկուս-խմբային քննարկում (ՖԽՔ)** 18-35, 36-55 և 56 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց ու տղամարդկանց հետ։ Հավելված Ա-ում ներկայացված են ՖԽՔ-ի մեթոդաբանության լրացուցիչ մանրամասները։

- **Առանցքային տեղեկատվական հարցազրույցներ** կառավարության և ՀԿ-ների՝ ընդհանուր առմամբ ութ ներկայացուցչի հետ, որոնց նպատակն էր ստուգել ՖԽՔ-ներից ստացված նախնական արդյունքները։ Հարցված կազմակերպությունների ցանկը կարելի է գտնել Հավելված Բ-ում։

Աղյուսակ 1.1 | ՖԽՔ մասնակիցների թիվը՝ ըստ սեռի, մարզի և տարիքային խմբի

Մարզը	18-35 տ. խումբ		36-55 տ. խումբ		56+տ. խումբ	
	Կանայք	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ
Կոտայք (քաղաքային)	18	8	19	12	18	9
Արարատ (գյուղական)	21	7	21	14	18	8
Երևան (մայրաքաղաքային)	18	4	18	8	18	10

Գենդերային վերլուծության **աշխարհագրական ծածկույթը** սահմանվել է փաստաթղթերի վերլուծության հիմքով՝ հաշվի առնելով ժողովրդագրական, բնակեցման և խոցելիության գործոնները (այսինքն՝ մարզային գործազրկության մակարդակը, սպառողական գների ինդեքսը և սահմանամերձությունը), ինչպես նաև մարզերի հեռավորությունը Երևանից: Ուսումնասիրությունն ընդգրկել է **Երևանի, Կոտայքի և Արարատի** մարզերը՝ յուրաքանչյուր վայրում նախատեսելով երեքական՝ կանանց և երեքական՝ տղամարդկանց ՖԽՔ՝ յուրաքանչյուր տարիքային խմբից մեկական ՖԽՔ (Աղյուսակ 1.1):

Ընդհանուր առմամբ ներգրավվել է 249 մասնակից. 169 կին (68%) և 80 տղամարդ (32%): Բոլոր երեք մարզերում ընդգրկվել է 31 հաշմանդամություն ունեցող անձ և 17 կերակրող կամ հղի կին: Մասնակիցների մեծամասնությունը՝ մասնավորապես 94%-ը կամ 234 փախստական, վարձակալել կամ ունեցել է սեփական բնակարան, և միայն 6%-ը կամ 15 հոգին է եղել պետության տրամադրած կացարանների շահառուն: Ավելի մանրամասն պատկերը ներկայացված է Նկար 1.1-ում և Նկար 1.2-ում:

Նախ, հարկ է նշել, որ հետազոտությունն ուներ մի շարք սահմանափակումներ: Դրանցից առաջինը Սյունիքի մարզն ընտրանքից բացառելն էր: Դա նշանակալի բացթողում էր՝ հաշվի առնելով, որ մարզը ենթարկվում էր մի շարք տնտեսական և անվտանգային մարտահրավերների, որոնք էլ ավելի են մեծացրել տեղի փախստականների խոցելիությունը: Դրանից

Նկար 1.1 | Պետության տրամադրած կացարաններում ապրող մասնակիցների թիվը



Նկար 1.2 | Վարձակալած կամ իրենց սեփական բնակարաններում ապրող մասնակիցների թիվը



Աղյուսակ 1.2 | Փախստականների մոտավոր թիվը՝ ըստ սեռի, տարիքային խմբի և բնակավայրի տիպի

Կանանց բաշխումը				
Տարածք	0-15 տ.	16-64 տ.	65+ տ.	Ընդամենը
Քաղաքային	22,513	15,909	4,459	42,881
Գյուղական	17,192	12,148	3,406	32,746
Տղամարդկանց բաշխումը				
Տարածք	0-15 տ.	16-64 տ.	65+ տ.	Ընդամենը
Քաղաքային	21,543	15,224	4,268	41,035
Գյուղական	16,452	11,626	3,259	31,337

Աղբյուր. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարություն. 2019թ.: «Ժողովրդագրական իրավիճակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում», ապրիլի 23: http://mss.nkr.am/?p=16739 :

Նշում. Սույն աղյուսակի արժեքները հաշվարկված են աղբյուրի տրամադրած տոկոսների հիման վրա:

բացի, Երևանից հետո Սյունիքը փախստականների՝ մեծությամբ երկրորդ ապաստարանն էր: Այնուամենայնիվ, ժամանակային սահմանափակումներով և ձմեռային եղանակային պայմանների պարագայում ընտրվեցին հաջորդ երկու ամենամոտ տարբերակներն, որոնք սահմանակից էին Երևան քաղաքին: Երկրորդ, չնայած փախստականների շրջանում երեխաների զգալի թվին, որոշվեց ձեռնպահ մնալ նրանց հետ շփումից: Պատճառն այն էր, որ կանոններն ու կանոնակարգերը կպահանջեին ավելի շատ ժամանակ և խստացված ընթացակարգեր՝ երաշխավորելու «մի՛ վնասիր» սկզբունքի պահպանումը: Նշված սահմանափակումը լուծելու համար աղջիկների և տղաների կարիքներին վերաբերող հարցերն ուղղվել են մեծահասակներին: Երրորդ, գործիքները չեն ներառել հարցեր՝ միտված ԼԳԲՏՔԻ անձանց կարիքների և ռիսկերի բացահայտմանը: Միայն 18-35 տարիքային խմբի ֆոկուս-խմբային քննարկման գործիքի մեկ հարցով փորձ է արվել պարզել տարբեր խմբերի, այդ թվում՝ ԼԳԲՏՔԻ անձանց կողմից արտակարգ իրավիճակներին արձագանքմանը մասնակցելու խոչընդոտները: Այնուամենայնիվ, չնայած այս սահմանափակ ընդգրկմանը, խնդիրը բավարար չափով չի ուսումնասիրվել և թույլ չի տվել այս խմբի վերաբերյալ որևէ վերջնական եզրակացության գալ:

1.3 Ժողովրդագրական բնութագիր

Տվյալների բաշխումը՝ ըստ սեռի և տարիքի

Փախստականների ընդհանուր թվից զատ, սակավ են նրանց սեռային կազմի, տարիքային բաշխվածության և աշխարհագրական առանձնահատկությունների վերաբերյալ տվյալները: Ժամանած ժողովրդագրական խմբի գենդերային պատկերը վերակառուցելու համար ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների ներկայացրած տոկոսները համադրվել են այդ համախմբության՝ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ հասանելի ժողովրդագրական բնութագրի հետ: Աղյուսակ 1.2-ն արտացոլում է այդ համախմբության թռուցիկ պատկերը՝ մոտավոր հաշվարկների հիմքով:

Նկարը՝ ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն | Անի Հովհաննիսյան

Ժողովրդագրական վերլուծություն

Ներկայացվում է, որ փախստականների գենդերային կազմը բաղկացած է 52% կանանցից և աղջիկներից[1]: Հղիների թիվը կազմում է 2070, որոնցից 88-ը ծննդաբերել են մինչև հոկտեմբերի վերջ, իսկ 1380-ը պետք է ծննդաբերեին սույն զեկույցից հետո վեցամսյա ժամկետում, այսինքն՝ մինչև 2023 թ. հոկտեմբերը[2]: Ընդհանուր առմամբ՝ երեխաները կազմում էին ժամանողների 31%-ը[3]: Ամենաթարմ տվյալներով՝ ժամանումից հետո առաջին վեց ամսվա ծնունդների 34,9%-ը եղել է մոր երրորդ կամ չորրորդ երեխայի ծնունդը[4]: Փախստականների մոտ 18%-ը 65 տարեկանից բարձր է[5]: Մոտ 41,6%-ը տեղափոխվել է Երևան: Կոտայքի և Արարատի մարզերն ընդունել են ժամանողների՝ համապատասխանաբար 8,3%-ին և 8%-ին՝ դառնալով Երևանից և Սյունիքից հետո ամենամեծ թվով փախստականներն ունեցող երկու հիմնական մարզերը: Սույն պատկերը վերահաստատվում է Հայաստանում Փախստականների կարիքներին արձագանքման միջգերատեսչական ծրագրում, ըստ որի՝ ամենաբարձր թվերը դիտվում են Երևանում (38%), Սյունիքում (16%), Կոտայքում (8%) և Արարատում (7%)[6]: Այդուհանդերձ, կասկածներ կան, որ այս թվերը գուցե փոփոխվել են, հատկապես մայրաքաղաքում և շրջակայքում, քանի որ շատերը որոշել են տեղափոխվել զբաղվածության ավելի շատ հնարավորություններ և ռեսուրսներ տրամադրող վայրեր: 2024թ. մարտին հաղորդվել է, որ Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար դիմել է 1473 փախստական, իսկ ժամանակավոր պաշտպանության վկայական է ստացել 76339 փախստական[7]:

1 ՄԱԲՀ Հայաստան: 2023թ.: *ՄԱԲՀ արձագանքը Հայաստանում փախստականների կարիքներին. իրավիճակային հաշվետվություն թիվ 3, 2023թ. նոյեմբերի 1*: հղում

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 ՄԱԿ ՓԳՀ: 2023թ.: Հայաստան: *Միջգերատեսչական կարիքների արագ գնահատման հաշվետվություն, հոկտեմբեր 2023թ.*: հղում

5 ՄԱԲՀ Հայաստան: 2023թ.: *ՄԱԲՀ արձագանքը Հայաստանում փախստականների կարիքներին. իրավիճակային հաշվետվություն թիվ 3, 2023թ. նոյեմբերի 1*: հղում

6 ՄԱԿ ՓԳՀ: 2023թ.: *Հայաստանում Փախստականների կարիքներին արձագանքման ծրագիր՝ հոկտեմբեր 2023թ. – մարտ 2024թ.*: հղում

7 «ԱՌԿԱ» լրատվական գործակալություն: 2024թ. մարտի 25: «Հայաստանի ներքին գործերի նախարար. Լեռնային Ղարաբաղից 1437 փախստական դիմել է քաղաքացիություն ստանալու համար»: հղում

2.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նկարը՝ Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ

2.1 Գենդերային դերեր և պարտականություններ

Աշխատանքի բաժանում

Հայաստանում ավանդական և մշակութային նորմերն ու հասարակական ակնկալիքներն ազդում են աշխատանքի բաժանմանն առնչվող գենդերային դերերի վրա. տղամարդիկ աշխատում են տնից դուրս, իսկ կանայք ավելի շատ զբաղվում են կենցաղային աշխատանքով, ինչը հաճախ նշանակում է, որ դուրս են մնում աշխատուժից[1]: Ըստ Արմստատի 2022թ. տվյալների՝ 15-47 տ. արական սեռի ներկայացուցիչների 71%-ը և իգական սեռի ներկայացուցիչների 48%-ն աշխատում են կամ աշխատանք են փնտրում[2]: Կանայք զբաղված են ոչ այնքան եկամտաբեր ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը և գյուղատնտեսությունը, որտեղ աշխատավարձերն ավելի ցածր են, մինչդեռ տեխնիկական ոլորտներում գերակշռում են տղամարդիկ: Բացի այդ, կանայք տղամարդկանցից ավելի շատ են ներգրավված չգրանցված աշխատանքում և երկու անգամից ավելի շատ ժամանակ են հատկացնում չվարձատրվող կենցաղային աշխատանքին, երեխաների և ընտանիքի հիվանդ, տարեց կամ հաշմանդամ անդամների

1 Եվրոպական Միություն: 2021թ.: Երկրի գենդերային նկարագիր: Հայաստան – օգոստոս 2021թ.: հղում

2 Արմստատ: 2023թ.: Կանայք և տղամարդիկ Հայաստանում, 2023 թ.: հղում

խնամքին: Կանանց երկու երրորդը, համեմատած տղամարդկանց մեկ երրորդից պակասի հետ, կարծում է, որ կինն է ընտանիքի հիմնական կերակրողը: Ավելին, տղամարդկանց կեսից ավելին և, հակառակը, կանանց կեսից պակասն են կարծում, որ տղամարդը պետք է լինի ընտանիքի հիմնական կերակրողը[3]:

«Այժմ և՛ տղամարդիկ, և՛ կանայք հավասար աշխատում են. ոչ ոք անգործ չի մնում: Մենք բոլորս պետք է աշխատենք, որ կարողանանք ծայրը ծայրին հասցնել: Հնարավոր չէ ամբողջ աշխատանքը թողնել տղամարդկանց ուսերին»:

—Կին, 56+ տարիքային խումբ, Արարատի մարզ:

ՖԽՔ-ները ցույց են տալիս, որ փախստականների շրջանում տղամարդկանց և կանանց հիմնական պատասխանատվությունները դեռևս կրում են ավանդական գենդերային դերերի ազդեցությունը՝ հատկապես ընտանիքի կերակրողի և կենցաղային պարտականությունների առումով, սակայն ճգնաժամի հետևանքով նկատվում է նաև որոշակի տեղաշարժ, քանի որ գնալով աճում է կանանց զբաղվածությունը: ՖԽՔ-ների ընթացքում կին հարցվողները նշել են, որ մինչև տեղահանումը տնային տնտեսությունում տղամարդկանց և կանանց դերերն ավելի հստակ էին, քանի որ ակնկալվում էր, որ կանայք ավելի շատ զբաղվում են տան կենցաղային պարտականություններով, մինչդեռ տղամարդիկ աշխատում են հիմնականում դրսում՝ ոչ գյուղատնտեսական աշխատանքի կամ հանքարդյունաբերության ոլորտում, իսկ գյուղատնտեսական ոլորտով զբաղված են և՛ կանայք, և՛ տղամարդիկ: ՖԽՔ-ների կին մասնակիցները նշել են, որ այժմ իրենք, ի լրումն իրենց կենցաղային պարտականությունների, ստանձնում են տղամարդկանց հետ միասին եկամուտ ստեղծելու հնարավորություններ փնտրելու լրացուցիչ պարտականություններ: Տեղահանումից հետո, չնայած որ փախստականների շրջանում դեռևս պահպանվում են աշխատանքի բաժանման ավանդական ակնկալիքները, **կանայք, իրենց ընտանիքներին աջակցելու համար, ավելի շատ են աշխատանք փնտրում կամ ընդգրկվում զբաղվածության ոլորտում:** Աշխատանքի բաժանման այս տեղաշարժը (կանանց կողմից տնից դուրս աշխատելը) նկատվում է փոփոխվող հանգամանքների և անհրաժեշտության հետևանքով: ՖԽՔ-ների ժամանակ և՛ տղամարդիկ, և՛ կանայք նշում էին, որ պետք է աշխատեին, որպեսզի կարողանային ծայրը ծայրին հասցնել: Գործազրկությունը տղամարդկանց ստիպում էր մնալ տանը, իսկ կանանց՝ աշխատանք փնտրել տնից դուրս: Հատկապես Երևանում ՖԽՔ-ների կին մասնակիցները նկատել են, որ իրենց հաճախ ավելի հեշտ է աշխատանք գտնել, հատկապես, եթե 55 տարեկանից ցածր են, մինչդեռ տղամարդկանց հնարավորություններն ավելի սահմանափակ են: Առանցքային տեղեկատուներից ոմանք նաև նշել են, որ կանայք ստանձնում են ցանկացած հասանելի աշխատանք՝ չնայած շատ դեպքերում գերորակավորված լինելուն, և սկսում իրենց սեփական բիզնեսանման նախաձեռնությունները, ինչպես օրինակ՝ իրենց ավանդական ուտեստներ պատրաստելը:

«Պարտականությունները նույնն են՝ ոչ ոք չի փոխվել, սակայն իրավիճակը փոխվել է: Այստեղ իրավիճակը մի փոքր այլ է, բայց պարտականությունները պահպանվում են: Պարտականությունները փոխվել են՝ կախված իրավիճակից. պետք է մտածեք, թե ինչպես կարող եք դրանք իրականացնել: Հայկական օջախն այսպիսին է՝ տղամարդն է իր վրա պարտավորություններ վերցնում»:

—Տղամարդ, 56+ տարիքային խումբ, Արարատի մարզ:

Աշխատանքի ավանդական բաժանման ակնկալիքը դեռևս պահպանվում է այն առումով, որ կանայք իրենց ուսերին են կրում չվճարվող կենցաղային պարտականությունների մեծ մասը, ներառյալ երեխաների խնամքը՝ ի

3 Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն: 2020թ., «Կովկասյան բարոմետր 2019 Հայաստան»: 2024 թ. ապրիլի 1-ի դրությամբ: հղում

լրումն ցանկացած ստանձնելիք վճարովի աշխատանքի: ՖԽՔ-ների որոշ տղամարդ մասնակիցներ նշում են այն կենցաղային պարտականությունները, որոնք կատարում էին իրենց ծննդավայրում նույնիսկ նախքան տեղահանումը, ինչպես օրինակ՝ երեխաների խնամքը և մասնակցությունը համատեղ որոշումների ընդունման ժամանակ: ՖԽՔ-ների կին մասնակիցներից մեկը նշեց, որ ամուսնու հետ համատեղում են երեխայի խնամքը, քանի որ հերթափոխով կանգնում են մարդասիրական օգնություն ստանալու հերթերում: Այդուհանդերձ, տղամարդ մասնակիցների մեծամասնությունն արտահայտում է ընտանիքի կերակրողի ավանդական պարտականությունը կատարած լինելու զգացում և տեղահանումից հետո իր պարտականություններում փոփոխություն չի տեսնում: Այսպիսով, գենդերային պարտականությունների ավանդական ընկալումը պահպանվում է, իսկ պարտականությունների փոփոխությունը, որն արտահայտվում է տնից դուրս աշխատուժում կանանց ներկայության մեծացմամբ, հիմնականում պայմանավորված է ի հայտ եկող կարիքներով: Չնայած այս փոփոխությունը բխում է անհրաժեշտությունից և կարող է համարվել ժամանակավոր՝ առանձին օրինակներ և դեպքեր հուշում են, որ, գուցե, բացվել է **հնարավորությունների պատուհան՝ կանանց և տղամարդկանց իրենց ավանդական գենդերային դերերից դուրս բերելու համար:**

Ի վերջո, տղամարդկանց հետ ՖԽՔ-ները նաև ցույց են տալիս, որ **փախստական տղամարդիկ հաճախ սաստիկ ճնշման տակ են հայտնվում՝ ընտանիքի կերակրողի իրենց դերը կատարելու** աշխատանք գտնելու և ընտանիքը ֆինանսապես ապահովելու պատասխանատվությունն իրականացնելու հարցում՝ անկախ հնարավորությունների սակավությունից: Երևանում 56 տարեկան և ավելի բարձր տարիքի տղամարդիկ արտահայտում են իրենց ընտանիքներին ֆինանսապես ապահովելու բարձր պատասխանատվության զգացում: Արարատում տղամարդիկ ընտանիքին ապահովելը նույնպես համարում են իրենց առաջնային պարտականությունը՝ չնայած աշխատանք գտնելու դժվարություններին և իրենց վարձակալությունը կորցնելու մտավախությանը: Բոլոր երեք մարզերում տղամարդկանց հետ ՖԽՔ-ները ցույց են տալիս, որ այս նոր իրականությունը ծանր է անդրադարձել նրանց վրա, հատկապես զբաղվածության սահմանափակ հնարավորությունների և սոցիալական մեկուսացման համատեքստում:

Եկամտի վաստակում

Բոլոր մարզերում և տարիքային խմբերում տղամարդկանց կողմից նշված առաջնային կարիքը զբաղվածությունն է, ինչը հաստատվում է նաև առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներով: Տղամարդկանց համար աշխատատեղերի սակավությունը նշանակալի մարտահրավեր է Երևանում, որտեղ գործազրկությունը հատկապես դժվար հաղթահարելի է: Փախստական տղամարդիկ մատնանշում են զբաղվածության ապահովման այն մարտահրավերները, որոնց բախվում են սահմանափակ աշխատանքային փորձ ունեցող երիտասարդները և 50 տարեկանից բարձր անձինք: Գործազրկության բարձր ռիսկի ներքո են նաև հաշմանդամություն ունեցող անձինք: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրությանը մասնակցած տղամարդիկ աշխատանքը համարում են ամենակարևոր և առաջնային հարցը՝ իրենց անհրաժեշտ գումարի պակասը լրացնելու համար: Նրանք ընդգծում են զբաղվածության հետ կապված լուծումներն ուսումնասիրելու կամ սեփական բիզնես սկսելու կարևորությունը:

Ի հակառակ տղամարդկանց, ովքեր զբաղվածությունը գլխավորապես ընկալում են որպես եկամուտ ստանալու և իրենց գենդերային դերակատարման միջոց, կանայք աշխատանքն ավելի շատ դիտարկում են որպես բնակարանի վարձավճարը և անհրաժեշտ իրերի գնման ծախսերը հոգալու միջոց, այլ ոչ թե իրենցից ակնկալիք: Նրանք նաև ավելի հակված են որպես իրենց ֆինանսական խնդիրները լուծելու առանցքային միջոցներ նշելու պետական օժանդակությունը, կացարանի տրամադրումը, դրամական օգնությունը և աջակցության այլ ձևերը:

Աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների և առցանց հարթակների գործունեության անբավարար իրավական կարգավորումը մտավախություն է առաջացրել, որ դրանք կարող են զբաղվել խարդախու-

թյամբ: Երևանում աշխատանք գտնելու փորձ կատարող տղամարդիկ հայտնել են, որ բախվել են կասկածելի հանգամանքների, այդ թվում՝ այնպիսի դեպքերի, երբ մատուցել են ծառայություններ, բայց իրենց աշխատանքի համար պատշաճ փոխհատուցում չեն ստացել: Ոմանք նաև օգտվել են հարթակներից, որոնք, իրենց կարծիքով, նույնիսկ աշխատանքային թրաֆիքինգի վտանգ են ներկայացրել. և իսկապես, իրենց աշխատանքի դիմաց ստացել են անբավարար վարձատրություն: Նմանապես, Հայաստանի մայրաքաղաք Երևանում մի կին նշեց, որ խուսափում է աշխատանքի տեղավորման գործակալություններից, քանի որ հաճախ պահանջում են 4000 ՀՀ դրամ (մոտ 10 ԱՄՆ դոլար) կանխավճար՝ առանց աշխատանքի չեղարկման դեպքում գումարը վերադարձնելու երաշխիքի: Ավելին, եղել են դեպքեր, երբ գործատուները պահանջել են կանխավճար կամ ոչ պաշտոնական հարկման տեսքով որոշակի տոկոս, օրինակ՝ վճարումից 10% նվազեցում:

Գոյություն ունեցող գենդերային նորմերը փախստականների որոշ խմբերի ավելի խոցելի են դարձնում խտրականության և գործազրկության նկատմամբ: Աշխատանքային քիչ փորձ ունեցող երիտասարդները և 50-ից բարձր տարիքի մարդիկ դժվարանում են աշխատանք գտնել: Բացի այդ, մասնակիցների մեծամասնությունը հայտնում է, որ աշխատանքի դիմաց ստացել է անբավարար վարձատրություն, ինչը վկայում է աշխատաշուկայում ավելի լայն խնդիրների՝ թերզբաղվածության և շահագործման մասին: Հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես անհամաչափորեն տուժում են գործազրկությունից՝ նրանց հասանելի աշխատանքի սահմանափակ հնարավորությունների պատճառով: Բացի այդ, հաշմանդամություն ունեցող անձինք դժվարություններ են ունենում հանրային տարածքների և հասարակական տրանսպորտի հասանելիության հետ կապված, ինչը սահմանափակում է նրանց շարժունակությունը:

Որոշումների ընդունում

Հայաստանում տնային տնտեսություններում որոշումների ընդունումն ունի հստակ գենդերային բաժանումներ, որոնք առավել տեսանելի են գյուղական վայրերում: Կանայք հակված են որոշումներ ընդունել «ներքին», իսկ տղամարդիկ՝ «արտաքին» հարցերի վերաբերյալ: Տղամարդիկ նաև որոշումներ են ընդունում համեմատաբար խոշոր գնումների, իսկ կանայք՝ առօրյա կարիքների վերաբերյալ: Ֆինանսների կառավարման առումով տղամարդիկ (75%) կանանցից (59%) ավելի շատ են ներգրավված ընտանեկան բյուջեի տնօրինման մեջ: Այդուհանդերձ, տղամարդկանցից երկու անգամ ավելի շատ կանայք են նշում, որ ընտանիքի բյուջեն տնօրինում են ամուսնու հետ միասին[4]:

Ինչպես բացահայտում են ՖԽՔ-ները, նախքան տեղահանումը իրենց ծննդավայրում որոշումների ընդունման դերերն արտացոլում էին ավանդական միտումները, որոնցում տղամարդիկ ավանդաբար պատասխանատու էին եկամուտ վաստակելու և սեփական հետաքրքրությունների վրա ծախսելու համար, իսկ կանայք կառավարում էին տնային տնտեսության ծախսերը և բյուջեն:

«Գյուղում [ընտանիքները] կարող էին ծախսել իրենց գումարները: Այստեղ պետք է գումար խնայել, և դա պետք է անի կինը»:

—Կին, 56+ տարիքային խումբ, Երևան:

Տեղահանումից հետո ստեղծված իրավիճակում ՖԽՔ-ների մասնակիցների համար **տնային տնտեսություններում որոշումների ընդունումը փոփոխական է, սակայն կանայք մեծամասամբ պատասխանատու են տնային տնտեսության մեջ ռեսուրսների՝ ներառյալ մարդասիրական օգնության բաշխման և տեղահանումից հետո իրենց սահմանափակ ֆինանսները տնօրինելու համար:** ՖԽՔ-ները բացահայտում են, որ տեղահանությունից հետո կանայք ավելի կարևոր դեր են ստանձնել ֆինանսական որոշումների ընդունման գործում և/կամ որոշումներն ավելի հաճախ են ընդունվում համատեղ. սա հատկապես վերաբերում է համեստ միջոցներ ունեցող ընտանիքներին, քանի որ աշխատավարձը պետք է

4 Նույն տեղում:

Նկարը՝ ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն | Անի Հովհաննիսյան

կառավարվի այնպես, որ բավարարի ընտանիքի կարիքները: ՖԽՔ-ների որոշ կին մասնակիցներ նշել են, որ տնային տնտեսության ռեսուրսների կառավարումը սկսել են վերահսկել դրանց սահմանափակության պատճառով, և այդ դերը ստանձնել են խնայելու և տնտեսելու նպատակով: Երբ հարցը հասնում է աջակցություն՝ հատկապես մարդասիրական օգնություն ստանալուն և բաշխելուն, 56+ տարիքային խմբի կանայք իրենց համարում են տնային տնտեսության որոշում ընդունողը: Կոտայքում մարդասիրական օգնությունը տնօրինելու դերը կանայք ստանձնել են՝ իբրև ընտանիքի խնամողի իրենց ավանդական պարտականությունների շարունակություն: Ինչ-որ իմաստով, **կանայք շարունակում են կառավարել տնային տնտեսության ռեսուրսները՝ դրանում արտացոլելով տնային տնտեսության մեջ խնամողի և կազմակերպչի իրենց ավանդական դերը:** Ճիշտ է նաև, որ ACTED-ի[5] կողմից մշակված կարիքների արագ գնահատման համաձայն՝ տեղահանված տնային տնտեսությունների մեծամասնությունը գլխավորում են կանայք, ինչը նույնպես կարող է լինել պատճառներից մեկը, թե ինչու են ավելի շատ կանայք դարձել իրենց տնային տնտեսությունների հիմնական որոշում ընդունողը:

«Բոլոր դեպքերում որոշումներն ընտանիքում կայացվում են միասին, սակայն որպես տան տղամարդ՝ ես ունեմ վերջին խոսքի իրավունքը»:

— Տղամարդ, 56+ տարիքային խումբ, Երևան:

Տղամարդկանց վերաբերյալ կարելի է արձանագրել, որ **մարզերում ավանդական գենդերային դերերի պահպանումը մատնանշում է, որ նրանց ընկալումները, և, հետևաբար, որոշումների ընդունման վերաբերյալ ակնկալիքները հիմնականում մնացել են անփոփոխ՝** չնայած տեղահանմամբ ծագած մարտահրավերներին և որոշումների ընդունման մեջ կանանց թվացյալ աճող դերին: Չնայած ՖԽՔ-ների տղամարդ մասնակիցներն իրենց տնային տնտեսության ֆինանսական որոշումների ընդունումը նաև նկարագրում են իբրև համա-

5 ACTED: 2024թ.: Կարիքների արագ գնահատման հաշվետվություն. Հայաստան – փետրվար 2024թ.:

տեղ, սակայն, կարծես, վերջնական որոշումն ընդունելու հարցում առկա է տղամարդու հեղինակությունն ընդգծող անվերապահ կողմնակալություն: Երևանում տնային տնտեսության ֆինանսական որոշումներում առկա է մի օրինաչափություն, ըստ որի՝ ֆինանսների կառավարման և կայուն եկամուտ ապահովելու համար հիմնականում պատասխանատու են 56 տարեկան և ավելի բարձր տարիքի տղամարդիկ: Կոտայքի և Արարատի մարզերում ֆինանսական որոշումներ ընդունելու առաջնային պատասխանատվությունը կրում են նույն տարիքային խմբի տղամարդիկ՝ ընդգծելով ընտանիքի հիմնական կերակրողի իրենց դերը: Չնայած ՖԽՔ-ներին մասնակցած տղամարդկանցից ոմանք ընդգծում են իրենց ընտանիքներում որոշումների համատեղ ընդունումը, նրանցից շատերի համար հիմնական պարտականությունները մնում են նույնը. փոխվել են միայն հանգամանքները: Որոշումների ընդունման դինամիկայում տեղահանման բերած փոփոխությունն ավելի շատ կապված է կարիքի և ռեսուրսների սակավության հետ:

Համայնքներում կամ մարդասիրական գործունեությանն առնչվող որոշումների ընդունմանը մասնակցության վերաբերյալ՝ ՖԽՔ-ների կին մասնակիցները նշում են, որ կանայք ավելի շատ են ազդում համայնքներում որոշումների ընդունման վրա, քան տղամարդիկ, քանի որ վերջիններս զբաղված են աշխատանքով կամ ունեն պատերազմական սթրեսներ: Միևնույն ժամանակ, ՖԽՔ-ների կին մասնակիցները ժամանակի սղությունը համարում են նման գործունեություն ծավալելու խոչընդոտներից մեկը: Հատկապես Արարատում կանայք հայտնում են, որ ընտանիքի խնամողի չվճարվող աշխատանքի պատճառով ժամանակի սղությունը սահմանափակում է որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություն տվող համայնքահեն նախաձեռնություններին (բացառությամբ մարդասիրական օգնություն ստանալուն) նրանց մասնակցությունը: Ի լրումն դրա՝ մասնակիցներից ոչ ոք իրականում տեղյակ չէ որևէ տեղական նախաձեռնությունից, որին կարող է մասնակցել: ՖԽՔ-ների տղամարդ մասնակիցների մեծամասնությունն իրեն չի ընկալում համայնքային որոշումների ընդունման վրա ազդեցություն ունեցող: Նրանցից մեկը նշեց, թե ակնկալվում է, որ որոշումներն ընդունեն տղամարդիկ, և դա այդպես է, թեև կարծում է, որ հնարավորության դեպքում այս պատասխանատվությունն ուրիշների հետ կրելն ավելի լավ ռազմավարություն կլիներ:

Այսպիսով, կանանց կողմից տնային տնտեսության եկամտի բացը լրացնելը և ավանդաբար տղամարդկանց ստանձնած դերերը հաճախ իրենց վրա վերցնելը պայմանավորված են տնտեսական անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ, ռեսուրսների կազմակերպման և բաշխման գործում կանանց դերի մեծացումը, ինչպես նաև ֆինանսական որոշումների ընդունման մեջ նրանց ընդլայնված դերը նշանակում է, որ իրենց տնային տնտեսություններում կանայք կարող են նաև խոսքի և գործողության ավելի մեծ ազատություն ձեռք բերել:

2.2 Ծառայությունների հասանելիություն

Ընդհանուր մարդասիրական օգնություն

Ե՛վ կանայք, և՛ տղամարդիկ իրազեկ էին հասանելի ծառայություններից, սակայն դրանց հասանելիության հիմնական խոչընդոտը համակարգում կողմնորոշվելու դժվարությունն էր: Երևանում **կանայք նշում էին, որ իրենք էին մարդասիրական օգնություն փնտրելու հիմնական պատասխանատուն**, ինչը ներառում էր երկար հերթերի և բյուրոկրատական քաշքշուկի հանդեպ տոկունություն, **մինչդեռ տղամարդիկ կարող էին ամոթի կամ զայրույթի զգացում ապրել՝ պատերազմի հետ կապված տրավմայի պատճառով:** Նմանապես, Կոտայքում կանայք հայտնել են նմանատիպ փորձառությունների մասին և նշել, որ հեռավոր շրջաններում, Երևանի հետ համեմատ, եղել են ավելի քիչ ծառայություններ և աջակցություն: Իսկ Արարատում տղամարդիկ հայտնել են, որ անհարմար են զգում քննարկել իրենց կարիքները և փնտրել աջակցություն:

Ինչպես նշվեց, տեղահանումից հետո կանանց դերը փոխվեց դեպի ընտանիքի կերակրողը՝ կապված այնպիսի իրավիճակային փոփոխությունների հետ, ինչպիսիք են ամուսինների

Նկարը՝ Մարտունու կանանց համայնքային խորհուրդ

կամ ընտանիքի արական սեռի անդամների կորուստը: Կանայք նշում էին, որ ակտիվ դեր են խաղում իրենց ընտանիքների համար ամենօրյա լուծումներ գտնելու հարցում:

«Խնդիրը անձնագրային բաժիններն են: Գրանցվեցի առցանց, հինգ անգամ գնացի, հինգ անգամ մերժվեցի, [և] հետո գնացի ղեկավարի մոտ, կրկին պայքար... Իմ խնդիրը երեխաներիս գրանցելն է, որ ստանամ երրորդ երեխայիս համար նախատեսված 1 միլիոն դրամը: Ես իմ բոլոր փաստաթղթերը ներկայացրել եմ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, իսկ նրանք ինձ չեն ասել, որ իմ երկու երեխաներին նույնպես պետք է հաշվառեմ: Չնայած որ նախկինում հարցրել եմ, ասել են, որ անհրաժեշտ չէ: Այդ պատճառով երրորդ երեխայիս դիմումը մերժվեց»:

—Կին, 28 տարեկան, Երևան:

Փախստականները շփոթված էին իրազեկվածության պակասի և տեղեկատվական բացերի պատճառով: ՖԽՔ-ների ժամանակ բոլոր մարզերից մտահոգություններ են հնչել օգնության անհավասար բաշխման և կարիքների ոչ համարժեք գնահատման վերաբերյալ: Որպես առանցքային մտահոգություն մատնանշվել է տեղահանման սկզբում դրամական աջակցություն ստանալու մարտահրավերը: Երևանում տղամարդիկ շեշտել են բնակարանային խնդրին միջամտելու հրատապ անհրաժեշտությունը՝ պատճառաբանելով ոչ համարժեք կենսապայմանները, ինչը սրվում էր դրամական օգնության ուշացումներով: Դա ստեղծում էր տեղափոխվելու և անկայունության վտանգ, ինչը հատկապես բացասաբար էր ազդում երեխաների վրա:

Հաշմանդամություն ունեցող անձինք և քրոնիկական կամ լուրջ առողջական խնդիրներով անդամներ ունեցող ընտանիքները հատկապես խոցելի են այդ ծառայություններից օգտվելու հարցում: Դժվարամատչելի տրանսպորտը և ենթակառուցվածքները շարունակում են մնալ հաշմանդամություն ունեցող՝ ինչպես Հայաստանի քաղաքացիների, այնպես էլ փախստականների հիմնական խոչընդոտը: Թեպետ Երևանի հասարակական տրանսպորտի համակարգը դարձել է ավելի մատչելի, այն դեռևս

Նկարը՝ Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ

չունի համընդհանուր նախագծում, որպեսզի սպասարկի հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցներին: Հետևաբար, հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ ստիպված են լինում տեղաշարժվել տաքսիներով՝ վերականգնողական ծառայություններից օգտվելու, կլինիկաներ այցելելու, փաստաթղթեր ձեռք բերելու և սոցիալական ծառայություններ, շուկաներ ու դպրոցներ այցելելու համար, ինչի հետևանքով ծախսում են ավելի մեծ գումար, քան հանրային ավտոբուսներից կամ գնացքներից օգտվողները: Կարևոր է նշել, որ այս լրացուցիչ ծախսերը հասարակական տրանսպորտի տարբերակների անբավարար հասանելիության արդյունք են: Մասնավորապես, անվասայլակով երթևեկելու հնարավորություն տվող տաքսիներն ավելի թանկ արժեն, քան սովորական տաքսիները6:

«Ես պատերազմի մասնակից եմ: Աջ ոտքս երկաթակապով են կապել, զինգրքույկս մնացել է Ծուշիում, և հիմա ինձ հաշմանդամի կարգ չեն տվել: Դրա համար ես չէի ցանկանա գնալ սահմանամերձ վայր: Ո՞վ գիտի՝ ինչ է լինելու:

—Տղամարդ, 22 տարեկան, Երևան:

Տեղեկատվություն

Գնահատումը բացահայտում է մարդասիրական օգնության մասին տեղեկության տարածման բարդ պատկեր, որում բանավոր խոսքն ի հայտ է գալիս որպես բոլոր տարիքային խմբերում գերիշխող ռազմավարություն: Այդուհանդերձ, հստակ տարիքային և սեռային դինամիկան ակնհայտ է: 56 տարեկան և ավելի բարձր տարիքի մասնակիցները մեծապես ապավինում են ոչ պաշտոնական ցանցերին՝ ընդգծելով համայնքային կապերի կարևորությունը: Եվ ընդհակառակը՝ 18-35 տարեկան երիտասարդ

6 ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն: 2024թ.: *Հայաստան – Գենդերային ահազանգ թիվ 2. Հայաստանում փախստականների ճգնաժամի գենդերային դինամիկան և հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը– ապրիլ, 2024թ.:* հղում

Նկարը՝ ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն | Անի Հովհաննիսյան

կանայք նախընտրում են սոցիալական ցանցերը և հեռուստատեսային հայտարարությունները, իսկ երկրորդ տեղում՝ բանավոր խոսքը՝ ընդգծելով թվային անջրպետը, որը կարող է ազդել կարևոր տեղեկության հասանելիության վրա: Չնայած երիտասարդ կանանց շրջանում տարածվածությանը՝ արձանագրվել են սոցիալական հարթակների արդյունավետ օգտագործման դժվարություններ: Այս բացահայտումն ընդգծում է ոչ միայն տեղեկատվության համար բազմազան ուղիներ տրամադրելու, այլ նաև բնակչության բոլոր շերտերին այդ ուղիները հասանելի և դյուրօգտագործելի դարձնելու կարևորությունը:

Հատկապես ՖԽՔ-ներում ներգրավված կանայք ակտիվորեն փնտրում են տեղեկություններ, ինչը մատնանշում է գիտելիքի և աջակցության նրանց մեծ ցանկությունը: Այս բացահայտումը հակադիր է Երևանում բնակվող տղամարդկանցից ստացված տվյալներին, որոնք որևէ մանրամասնություն չեն հաղորդել իրենց տեղեկատվական աղբյուրների մասին, ինչը կարող է վկայել, որ հիմնական տեղեկույթ փնտրողները կանայք կամ համայնքի այլ անդամներն են: Տեղական ինքնակառավարման մարմինները, մասնավորապես Կոտայքի և Արարատի մարզերում, կարևոր դերակատարում ունեն տեղեկատվության գործում: Այն, որ ստեղծված տաք սննդի տրամադրման կետերը սկսել են ծառայել նաև որպես տեղեկատվական կենտրոններ, ընդգծում է մարդասիրական աջակցության վերաբերյալ տեղեկատվության մատչելի վայրերի անհրաժեշտությունը:

Պատասխանելով իրենց նախընտրած հաղորդակցման միջոցների մասին հարցին՝ **տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք նշել են, որ նախընտրում են անձնական զանգերը կամ սոցիալական աշխատողների միջոցով տեղեկատվությունը:** Սա ընդգծում է հարմարեցված հաղորդակցության ռազմավարությունների կարևորությունը: Կանայք նշել են, որ գերադասում են, որ տեղական ինքնակառավարման մարմինները ծառայեն որպես թարմ տեղեկատվության կենտրոնացված կետեր: Տղամարդիկ նույնպես նախապատվությունը տվել են տեղական ինքնակառավարման մարմինների թարմացված տեղեկատվությանը՝ ընդգծելով հաղորդակցման հստակ և թափանցիկ ուղիների անհրաժեշտությունը: Կարևորվել է ՀԿ-ների դերը տեղեկատվական

Նկարը՝ ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն | Անի Հովհաննիսյան

բացերը լրացնելու հարցում՝ մատնանշելով նրանց կարևորությունը համայնքային աջակցության մեջ: Կառավարության աջակցության հարթակը, որը հիշատակվում է առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցում, կոչված է հանդես գալու իբրև կենտրոնացված տեղեկատվական կենտրոն. այնուամենայնիվ, ՖԽՔ-ների ընթացքում հարցվողները կարծես թե անտեղյակ էին դրա գոյությունից: Ուստի, հնարավոր է, հասանելի ռեսուրսների մասին իրազեկման հարցում առկա են բացեր:

«Ես անմիջապես նշեցի, որ անկողին չունենք, հագուստ չունենք, մնալու տեղ չունենք, ընկերների տներում ենք ապրում, բայց մինչև ե՞րբ»: Բնակարանները լավ վիճակում չեն, ավերակներ են, վարձը թանկ է: Այս ցուրտ ամիսներին վառելիքի խնդիր ունենք»:

—Արարատի մարզ, տղամարդ, 54 տարեկան:

Բնակարանային խնդիր

Բնակարանների վարձավճարները չափազանց բարձր են, ինչը լուրջ խնդիր է այն փախստականների համար, ովքեր չունեն բնակարանային հարցի երկարաժամկետ լուծման հնարավորություն: Երեք մարզերի առանցքային տեղեկատուները նշել են, որ 2023թ. վերջին փախստականների մեծ մասն ապրում էր վարձակալած բնակարաններում: Վարձավճարներից այս կախվածությունը հանգեցրել է չկարգավորվող շուկայում բնակարանների գնի աճին, ինչի մասին իրենց մտահոգությունը բարձրաձայնել են առանցքային տեղեկատուները և ՖԽՔ-ների մասնակիցները: Փախստականների միայն փոքր տոկոսն էր ապրում հարազատների կամ ընկերների հետ, և շատ քչերն ունեին իրենց սեփական տունը: Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք բնակարանային հարցը համարում էին թիվ մեկ խնդիր, ընդ որում՝ տղամարդիկ շեշտադրում էին հարմար բնակարանների բացակայությունը և վարձակալության գների կողոպտիչ բնույթը:

Տղամարդ հարցվողները հաղորդել են, որ դժվարություններ ունեն բնակարանների վարձավճարները տալու հարցում, իսկ ոմանք իրենց տները կորցնելու վտանգի տակ են: Ընտանիքի կազմը հաճախ սահմանափակում է բնակարանի ընտրության հնարավորությունը, իսկ որոշ դեպքերում վարձակալվող տարածքը չի համապատասխանում գնին: Օրինակ՝ չկահավորված տարածքի վարձակալությունն առաջարկվում էր ամսական 200000 ՀՀ դրամով (497 ԱՄՆ դոլար): Խնդիրը բարդացնում են նաև կանխավճարները: Եթե ապագա վարձակալներն օրինական պայմանագիր են խնդրում, ապա վարձավճարները կտրուկ բարձրանում են: **Կին հարցվողները հայտնել են, որ տարածք վարձակալող միջնորդներն այդ տարածքները վարձակալության են հանձնել ավելի բարձր գնով, իսկ սեփականատերերը միջնորդավորված վարձակալներից պահանջել են ազատել իրենց սեփականությունը:** Հարցվածները նկարագրել են նաև կազմակերպված սխեմաներ, երբ իրենցից գումար են կորզել: Նրանք, ովքեր գտել են անվճար բնակարաններ, հյուրընկալվել են հարազատների բնակարաններում կամ պետության տրամադրած կացարաններում, պատմում են իրենց կրած անհարմարությունների, ինչպես նաև բուն տարածքի ստանդարտից ավելի վատ վիճակի մասին:

Ընդհանուր առմամբ՝ բնակարանային հարցում ամենախոցելի խումբն այն վարձակալներն են, որոնք գտնվում են վտարման մշտական սպառնալիքի տակ, ինչը սրվում է դրամական օգնության ուշացումներով և աշխատանք չգտնելու պատճառով: Հատկապես կանայք նշում են, որ ունեն անապահովության աճող զգացում՝ կապված բնակարանը կորցնելու մտավախության հետ: Այս զգացումը համատարած է բոլոր տարիքային խմբերում: Անծանոթ վայրերը, ենթակառուցվածքների անհասանելիությունը և սակավությունը՝ հատկապես կապված տունդարձի տրանսպորտի հետ, լուրջ մարտահրավերներ են ստեղծում փախստականի կարգավիճակում հայտնված կանանց համար: Սահմանամերձ կացարանները նույնպես սրում են անվտանգության մտավախությունները: Կանայք բախվում են նաև բնակտարածքի մարդաշատության և անձնական տարածքի բացակայության հավելյալ խնդիրներին: Չնայած այս մարտահրավերներին՝ կան նաև դրական օրինակներ. ըստ առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների՝ Արարատում գյուղի ղեկավարությունն ակտիվորեն փնտրել է բնակարանային լուծումներ, ինչը հանգեցրել է հանրակացարաններում ապրող ընտանիքների թվի զգալի կրճատմանը:

Առողջապահական ծառայություններ

Պետպատվերից դուրս առողջապահական ծառայությունները և դեղամիջոցները հիմնականում մատչելի չեն փախստականների մեծ մասին: Հատկանշական է, որ Հայաստանում առողջապահությունը համարվում է կրթությունից հետո երկրորդ ամենագործուն հանրային ծառայությունը: Բոլոր երեք մարզերի արական սեռի հարցվողներն ընդհանուր գոհունակություն են հայտնել առողջապահական ծառայություններից, թեև Արարատից տղամարդ փախստականները նշել են կոնկրետ մարտահրավերներ, ինչպիսիք են տրանսպորտը և վճարովի ուղեգրերը: Այս մարտահրավերները մատնանշում են հասանելիության սահմանափակումները:

Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներից ստացված արդյունքները հաստատում են այս դիտարկումները՝ թույլ տալով ենթադրել, որ չնայած առողջապահական ծառայությունների բարելավման շարունակական ջանքերին՝ որոշ փախստականներ շարունակում են դժվարություններ ունենալ դրանց հասանելիության հարցում: Կին հարցվողները խոսել են իրենց և իրենց ընտանիքների վրա ազդող առողջական խնդիրներին առնչվող փորձից՝ ներառյալ սթրեսը, արյան բարձր ճնշումը, գլխացավերը և անքնությունը: Նրանք նաև հիշատակել են ավելի լուրջ հիվանդություններ, այդ թվում՝ շաքարախտը, քաղցկեղը և այլն: Նշել են, որ իրենց որոշ հրատապ առողջապահական կարիքներ գերազանցել են պետպատվերի շեմը:

Ավելին, դրամական օգնության ուշացումները, սահմանափակ ռեսուրսները և բնակարանային բարձր վարձավճարներն ավելի են խորացրել լրացուցիչ առողջապահական ծառայություններից օգտվելու նրանց անկա-

րողությունը: Հաշվի առնելով սահմանափակ ֆինանսական ռեսուրսները, պարզվել է, որ մասնակիցներն առաջնահերթությունը տալիս են իրենց կենցաղային կարիքները հոգալուն, քան բժշկական և հոգեբանական աջակցությանը: Սա խոսում է այն մասին, որ փախստականների ընդհանուր բարեկեցությունն ու դիմադրողականությունը բարելավելու համար անհետաձգելի անհրաժեշտություն են կայուն եկամուտ ստեղծող հնարավորությունները: Տղամարդկանց միջև քննարկումները նաև ընդգծում են հավելյալ թղթաբանությունն ու բյուրոկրատիան, որին բախվում են հաշմանդամություն ունեցող անձինք, երբ փորձում են բուժում կամ դեղորայք ստանալ:

Հոգեկան առողջության ծառայություններ

«Ներկայում ֆիզիկական հիվանդությունների տեսքով խորը դեպրեսիվ վիճակների ի հայտ գալու պատճառը հոգեբանական աջակցությունից շատերի հրաժարվելն է: Հարևանների/ընկերների մոտ շատ տարածված պահվածք է, երբ միմյանց հանդիպելիս մարդիկ խոսելու փոխարեն լաց են լինում...»:

—Երևան, կին, 47 տարեկան

Փախստական կանայք հայտնել են, որ իրենք և իրենց ընտանիքներն ահագնացող սթրեսի և տագնապի մեջ են: Սթրեսը տարածված խնդիր էր բոլոր երեք մարզերում: Անցյալի դժվարությունների հիշողությունները, որոնցից էր սովը բլոկադայի ժամանակ, տառապանքների լուրջ պատճառ էին թե՛ մեծահասակների, թե՛ երեխաների համար: Շատերը նշել են, որ սթրեսը վերածվել է դեպրեսիայի, որն ուղեկցվում է այլ ֆիզիկական ախտանիշներով, ինչպիսիք են արյան բարձր ճնշումը, սրտի հետ կապված խնդիրները, շաքարախտը, նյարդաբանական խանգարումները և անքնությունը: Նկատվել է, որ սթրեսը և տեղահանությունը սրել կամ հրահրել են քրոնիկ վիճակները: Հատկանշական է, որ վերոհիշյալ առողջական խնդիրների մեծ մասը, հատկապես սթրեսը և դեպրեսիան, ազդել են կին մասնակիցների վրա: Մինչդեռ տղամարդիկ հայտնել են, որ կարոտում են

Նկարը՝ ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն | Անի Հովհաննիսյան

իրենց լքված տները, և դրա հետ կապված հիշողությունները սթրեսի ուժեղ պատճառ են: Որոշ մարդկանց մեջ ծանոթ առարկաներն արթնացնում են անհանգստացնող հիշողություններ, որոնք ուղեկցվում են իրենց նախկին տների տևական կարոտով:

Մասնակիցները խոսել են դժվարությունների հաղթահարման տարբեր մեխանիզմներից: Փախստական բախտակիցների հետ հանդիպումների և այլ շփումների շնորհիվ ստացված համայնքային աջակցությունը մխիթարություն է բերում դժբախտության պայմաններում՝ չնայած սահմանափակ շարժունակության պատճառով միմյանց հանդիպելու դժվարությանը: Դժվարությունների հաղթահարման ռազմավարությունները ներառել են աշխատանք որոնելը, տարբեր զբաղմունքներով իրենք իրենց շեղելը և ընկերներից ու հարազատներից աջակցություն հայցելը: **Որոշ կանայք նշել են, որ օգտագործում են քնաբերներ՝ հաղթահարելու անքնությունը և կորստի ճնշող մտ-**

քերը: Ի հակադրություն՝ տղամարդիկ նշել են, որ դիմում են ալկոհոլի օգնությանը, որ բթացնեն հուզական ցավը:

Հոգեբանական աջակցության հասանելիության պատկերը ոչ միանշանակ էր, քանի որ որոշ դեպքերում այն անհասանելի էր, իսկ այլ դեպքերում դրա առկայությունից չէին օգտվում: Չնայած բժշկական ծառայությունները Երևանում ընդհանուր առմամբ գոհացուցիչ էին՝ կանայք դժվարանում էին հոգեբանական աջակցություն ստանալ դրա բարձր գնի պատճառով. հոգեբանին այցելելը մատչելի չէր՝ մեկ այցն արժեր 10000 դրամ (24 դոլար): Արարատում, չնայած հոգեբանական աջակցության առավելությունների մասին իրազեկված լինելուն, ընտանիքները կարծես թե չէին ցանկանում օգտվել հատուկ իրենց համար նախատեսված անվճար ծառայությունից: Մասնակիցներից ոչ մեկը չի հայտնել հոգեկան առողջության աջակցություն ստանալու մասին, ինչը ցույց է տալիս, որ այդ ծառայությունների մասին իրազեկվածության և դրանցից օգտվելու միջև առկա է եղել խզվածք:

Կրթություն

Քանի որ սույն վերլուծությունը երեխաների հայացքներն ու մտքերն արտացոլելու հարցում ունեցել է սահմանափակումներ, ուստի հարցված ծնողների տեսակետներն արտահայտում են իրենց երեխաների փորձառությունների ավելի հպանցիկ պատկեր: Հարցվողները հետևողականորեն շեշտում են երեխաների կրթության անընդհատության կարևորությունը՝ անկախ տարիքից և սեռից: Այդուհանդերձ, տեղահանման ժամանակ ռեսուրսների և ծառայությունների հասանելիության սահմանափակությունը հաճախ հանգեցնում է նրան, որ կրթությունը բազմաթիվ տնային տնտեսություններում ընկալվում է որպես ոչ հրատապ առաջնահերթություն: Հնարավոր են մի քանի պատճառներ, թե ինչու երեխաները չեն շարունակում իրենց կրթությունը, և դրանց թվում են տարբերությունը Հայաստանի հանրակրթական համակարգից, մանկապարտեզների բացակայությունն այն բնակավայրերում, որտեղ նրանք տեղափոխվել են, և ծնողների ցանկությունն իրենց երեխաների համար ապահովելու որակյալ կրթության հասանելիություն:

Դրամական օգնություն

«Մինչև ՀՀ քաղաքացիություն կամ փախստականի կարգավիճակ չստանանք, մենք չենք կարող թոշակներ և սոցիալական նպաստներ ստանալ: Հաշմանդամներն ու թոշակառուները նպաստ և թոշակ չեն ստանում: Մենք ստիպված էինք դիմել փախստականի փաստաթուղթ ստանալու համար, որ կենսաթոշակ ձևակերպեն»:

—Արարատի մարզ, կին, 50 տարեկան

«Առավոտյան ժամը երկուսից կամ չորսից, երբ էլ գնանք, հերթեր են լինում, միշտ ասում են, որ պետք է հաշվառեն և գրանցեն, ձեր հերթը դեռ չի հասել»: (Արարատի մարզ, կին, 37 տարեկան)
«Տրամադրված աջակցությունից ստացել ենք ընդամենը հարյուր հազար դրամ: Անձամբ ես դրանք չեմ ստացել, քանի որ ՀՀ քաղաքացի եմ, երբ մեզ Մարտունիից տեղահանեցին, եկա Հայաստանի Հանրապետություն, և հիմա էլ նշել են, որ աջակցություն չեմ ստանալու»:

—Արարատի մարզ, կին, 37 տարեկան

«Մնունդը ամենամեծ խնդիրը չէ, խոստացված գումարից ես ստացել եմ դրամական օգնություն միայն մեկ անգամ: Ե՞րբ ենք ստանալու այն: Արդյոք համակարգում չի երևում, որ մեկը ստացել է այն, իսկ մյուսը ընդհանրապես ոչինչ չի ստացել»:

—Արարատի մարզ, տղամարդ, 42 տարեկան

Տեղահանումից հետո Հայաստանի կառավարությունը փախստականների համար իրականացրել է ֆինանսական աջակցության մի քանի սխեմաներ, մասնավորապես՝ բոլոր փախստականներին 100000 ՀՀ դրամ միանվագ աջակցություն, ինչպես նաև 40000 ՀՀ դրամ՝ բնակարանի վարձակալության, և 10000 ՀՀ դրամ՝ կոմունալ վարձավճարների համար աջակցություն: Բնակարանի վարձավճարների աջակցությունը պետք է տրամադրվի ամսական՝ 2023թ. հոկտեմբերից մինչև 2024թ. դեկտեմբեր (սկզբնապես՝ 2023թ. հոկտեմբերից մինչև 2024թ. մարտ՝ համաձայն 2023թ. հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման, որը թարմացվել

է 2024թ. մարտին՝ աջակցությունը երկարաձգելով մինչև 2024թ. դեկտեմբեր): Իրականացվել է նաև երկամսյա (2023թ. նոյեմբեր-դեկտեմբեր) աջակցության ծրագիր՝ 50000 ՀՀ դրամի չափով (2023թ. նոյեմբերի 9-ի թիվ 1957-Լ որոշում)[7]:

Հարցվածների կարծիքով՝ դրամական օգնության տրամադրումն ուղեկցվում է ուշացումներով և բյուրոկրատական քաշքշուկով: Ըստ առանցքային տեղեկատուի՝ 109000 փախստական ստացել է միանվագ դրամական օգնություն: Այդուհանդերձ, խնդիրներ կան բնակարանի վարձակալության և կոմունալ վարձավճարների համար կառավարության հատկացրած 50000-ական ՀՀ դրամների (124 դոլարին համարժեք) տրամադրման հետ, ինչի հետևանքով 2023թ. դեկտեմբերին և 2024թ. հունվարին նախատեսված որոշ փոխանցումներ հետաձգվել են: ՖԽՔ-ի արդյունքները բացահայտել են մի շարք մարտահրավերներ, որոնցից հիմնականը, ըստ մասնակիցների, հատկացված վճարներն ուշացնելը կամ չստանալն է: Որոշ կանայք նշում են, որ կենսաթոշակները և այլ նպաստներ կամ չեն ստացել, կամ դադարել են ստանալ:

Հայաստան ժամանելուն պես հաշմանդամություն կամ կենսաթոշակային տարիք ունեցող անձինք սկսել են ստանալ Հայաստանի սանդղակներով կենսաթոշակներ և սոցիալական նպաստներ, ինչը նախկինում նրանց ստացածից պակաս է: Կանայք բողոքել են իրենց կարգավիճակը գրանցելու երկար հերթերից, ինչը նրանց հաճախ ստիպում էր սպասել վաղ առավոտից մինչև ուշ գիշեր՝ ավելի խորացնելով անվտանգության նրանց մտավախությունները: Տղամարդիկ նաև բարձրաձայնել են իրենց հիասթափությունը՝ կապված նպաստների անհավասար բաշխման հետ, երբ ոմանք համեմատաբար արագ են ստացել միջոցները, իսկ մյուսներինը տևականորեն հետաձգվել են: **Կանայք նաև նկատել են, որ դրամական օգնության ուշացումները խոչընդոտում են առողջապահական ծառայություններից իրենց օգտվելու հնարավորությունը:** Ավելին, հարցվողների շրջանում տարածված մտահոգություն էր դրամական օգնության հայտադիմումների բարդությունը, ինչպես նաև չափորոշիչները, որոնք որոշակի անձանց թույլ չէին տալիս նպաստ ստանալ:

2.3 Պաշտպանություն

Գենդերային բռնություն

Տարբեր մարզերի կին մասնակիցները, երբ հարց է տրվել իրենց դիտարկումների մասին, բացահայտորեն չեն նշել գենդերային բռնությունը (ԳԲ): Այդուհանդերձ, ակնկալվում է, որ ճգնաժամի ընթացքում գենդերային բռնության դեպքերը կաճեն՝ թեպետ հաշվետվությունների օգնությամբ դրանք հայտնաբերելը կարող է բարդ լինել: Դժվար է գտնել վիճակագրություն մինչև տեղահանումը ԳԲ-ի հարցում տիրող իրավիճակի վերաբերյալ, սակայն հիմնվելով հայրիշխանական գենդերային նորմերի և սեռերի միջև ուժային անհավասար հարաբերությունների վրա՝ կարելի է ենթադրել, որ ԳԲ-ի դեպքերի մասին, ամենայն հավանականությամբ, հաղորդում քիչ է տրվում: **Երբ հարցեր են տրվել ԳԲ-ի վերաբերյալ իրենց դիտարկումների և կարծիքների մասին, բոլոր տարիքային խմբերի կին հարցվողները, դրան ուղղակիորեն անդրադառնալու փոխարեն, քննարկել են տղամարդկանց մարտական տրավմաների հաղթահարումը և տեղահանմանը հարմարվելու դժվարությունից բխող խոցելիությունը:** Գենդերային բռնության մասին հաղորդումների բացակայության առնչությամբ կարելի է ենթադրել մի քանի պատճառ, այդ թվում՝ վերապրածի խարանն ու ամոթը, մշակութային նկատառումներից ելնելով ԳԲ-ի մասին բարձրաձայնելու անվճռականությունը և/կամ ԳԲ-ի մասին ցածր իրազեկվածությունն ու թյուրընկալումը: Ջուգընկերոջ բռնությունը հաճախ նորմալացվում և համարվում է ԳԲ-ի ամենատարածված ձևը[8], որը սրվում է ճգնաժամի սթրեսից և տրավմայից: Լռեցնելը և զուտ դիտորդի կեցվածքը ստեղծում

7 «Մարդը կարիքի մեջ»: 2024թ.: Բազմաոլորտային գնահատման հաշվետվություն 2023 թվականի աշնանը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության մարտահրավերների և կարիքների վերաբերյալ: հղում

8 ՄԱԲՀ Հայաստան: 2024թ.: Մենք այստեղ ենք. Հայաստանում փախստականների շրջանում գենդերային բռնության որակական արագ գնահատում. հղում

Նկարը՝ CARE Հարավային Կովկասի գրասենյակ | Քեթևան Խաչիձե

են միջավայր, որում զուգընկերոջ բռնությունը կարող է աննկատ մնալ: Զբաղվածության և եկամտի ստեղծման գործում կանանց դերի փոփոխությունը կարող է փոխել տնային տնտեսություններում գենդերային իշխանության ավանդական դինամիկան: Սա երբեմն կարող է հանգեցնել նրան, որ տղամարդկանց թվա, թե կորցնում են ընտանիքի նկատմամբ վերահսկողությունը, ինչն իր հերթին կարող է մեծացնել ԳԲ-ի ռիսկը[9]:

ՖԽՔ-ների ընթացքում մասնակիցները շեշտել են թմրամիջոցների և ալկոհոլի օգտագործման բարձր մակարդակը, ինչը նույնպես դարձել է դժվարությունների հաղթահարման բացասական մեխանիզմ: Մատնանշվել է, որ տղամարդիկ և տղաները հակված են դիմելու այս տարբերակին, ինչը կարող է նպաստող գործոն լինել համայնքում ԳԲ-ի տարածման համար: Միաժամանակ թե՛ տղամարդ, թե՛ կին հարցվողները նշել են աշխատանքային շահագործման ռիսկը, օրինակ՝ աշխատավարձ չստանալը: Քննարկումներում նաև ընդգծվել է բնակարան փնտրելիս սեռական շահագործման հնարավոր ռիսկը: Դեռահաս աղջիկներն ու տղաները կարող են նաև բախվել այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են դպրոցում հասակակիցների ոտնձգությունները՝ մշակութային և լեզվական տարբերությունների պատճառով:

Անվտանգություն

Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ և՛ տղամարդիկ, և՛ կանայք ընդհանուր առմամբ հայտնում են, որ ապահով են զգում իրենց համայնքներում: Այդուհանդերձ, տղամարդիկ հակված են իրենց անվտանգության զգացումը կապելու կոնկրետ ֆիզիկական գործոնների հետ: Դրանցից են իրենց տան տեղադրությունը, սահմանամերձությունը և այդ հատվածում մարտական գործողությունների սպառնալիքը:

9 ՄԱԲՀ և CARE: 2020թ.: «Կանանց տնտեսական հզորացման կապակցում, գենդերային բռնության վերացում և սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների ապահովում»: Աշխատանքային փաստաթուղթ. հղում

Նկարը՝ CARE Հարավային Կովկասի գրասենյակ | Քեթևան Խաչիձե

Բացի այդ, **կանայք ֆինանսական ապահովությունն ընկալել են որպես իրենց ապահովության զգացումի հիմնական պատճառ:** Օրինակ, անվտանգության զգացումը հաճախ կապված էր աշխատաշուկային հասանելիություն ստանալու նպատակով աշխատանքի տեղավորման գործակալություններին վճարելու, ինչպես նաև բնակարանի ու սննդի համար բավարար գումար ունենալու հետ:

Բոլոր տարիքի կանանց և տղամարդկանց հետ ՖԽՔ-ները վկայում են, որ նոր միջավայրն ու տրանսպորտային համակարգին ծանոթ չլինելը հատկապես Երևանում ծնողների շրջանում առաջացրել են մտահոգություններ իրենց երեխաների անվտանգության վերաբերյալ: Սա այն գործոններից է, որը ծնողները հաշվի են առնում իրենց երեխաներին դպրոց ուղարկելու կամ բուժօգնության դիմելու որոշումն ընդունելիս, քանի որ վարանում են իրենց դուստրերին կամ որդիներին միայնակ ուղարկել տարբեր վայրեր:

2.4 Հաղթահարման մեխանիզմներ

Փախստականների տեղահանման նախորդ՝ 2020թ. փորձը նրանց թույլ տվեց նորից գործարկել հաղթահարման մի քանի մեխանիզմներ՝ ներառյալ գնված սննդի քանակի կամ որակի նվազեցումը, իրենց խնայողությունները ծախսելը, նվիրատվություններ ստանալը կամ մարդասիրական օգնություն փնտրելը[10]: Հաշվի առնելով աշխատանքի բացակայությունը և անհրաժեշտ ծախսերը, հավանական է, որ փախստականները հետագայում էլ կկիրառեն հաղթահարման նմանատիպ մեխանիզմներ: Ամենից հաճախ հիշատակվող հաղթահարման կիրառելի մեխանիզմն իրենց խնայողությունները ծախսելն է: Ելնելով ՖԽՔ-ների արդյունքներից՝ կարելի է ենթադրել, որ 2022-23թթ. Լաչինի միջանցքի շրջափակումը, որը

10 Պաշտպանության մոնիտորինգի հաշվետվություն թիվ 1. Հայաստան (նոյեմբեր-դեկտեմբեր 2020թ.): հղում

վերապրեցին փախստականները, նրանց որոշ չափով պատրաստեց ապրուստի միջոցների հարցում զարգացնելու հարմարվողական կարողություններ, քանի որ պետք է խնայեին ու տնտեսեին՝ իրենց սնունդ թույլ տալու և առաջնային այլ կարիքներ բավարարելու համար:

Այլ խոսքով՝ հարևանություն, ընկերություն, աշխատանք, թոռներ՝ մենք նոր կյանք ունենք սկսելու: Ուզենք, թե չուզենք, սա այսօրվա հրամայականն է: Կարծում եմ՝ այսպես մենք կհաղթահարենք»:

—Տղամարդ, 56+ տարիքային խումբ,
Արարատի մարզ:

Սթրեսին դիմակայելու հարցում ՖԽՔ-ները ցույց են տալիս, որ 56 տարեկան և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ հատկապես դժվար են հաղթահարում տեղահանությունը, մինչդեռ միջին տարիքի անձինք, երիտասարդներն ու երեխաները կարող են ավելի արագ հարմարվել: Ամենից հաճախ հիշատակվող հաղթահարման մեխանիզմներն են նախկին համայնքից այլ մարդկանց հետ հանդիպելն ու շփվելը՝ հեռախոսազանգերով կամ հերթերում դեմ առ դեմ հանդիպելով: Խնդիրներից մեկն այն է, որ փախստականները ցրված են ամբողջ Հայաստանով, ինչը խոչընդոտում է հարազատների և ընկերների հետ հաճախակի հանդիպումները:

Հիշատակված այլ հաղթահարման մեխանիզմներից է ինտեգրումը, ինչպես օրինակ՝ հարևանների և ընկերների հետ խոսելը: Կանանց խմբում մի կին նշեց, որ աշխատանքը հաղթահարման մեխանիզմ է: Իսկ մի տղամարդ մասնակից քննարկում էր խմելը և ծննդավայրի մասին խոսելը որպես հաղթահարման մեխանիզմ: Այդուհանդերձ, ռիսկային վարքագիծ դրսևորելը որպես հաղթահարում ուղղակիորեն չի քննարկվել՝ թեպետ հիշատակվել է, երբ մասնակիցներին հարցրել են իրենց հոգեկան առողջության և բռնության դիտարկումների մասին: Այս արդյունքները համահունչ են «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության իրականացրած վերջին գնահատմանը, որը ցույց է տվել, որ փախստականների 80,6%-ը հայտնել է, որ շփումներ ունի ընդունող համայնքի հետ: Այդուհանդերձ, ներգրավման համար գոյություն ունեն լուրջ խոչընդոտներ՝ հիմնականում կապված կենսապայմանների (օրինակ՝ բնակարանի վարձակալության մեծ ծախսերի, գործազրկության, նախկին համայնքի անդամներից մեկուսացման), տեղանքին բավարար ծանոթ չլինելու, լեզվական և մշակութային տարբերությունների հետ[11]: Որոշ մասնակիցներ ընդգծել են ինտեգրման և դրան աջակցող միջավայրի առկայության կարևորությունը:

11 «Մարդը կարիքի մեջ»: 2024թ.: Բազմաոլորտային գնահատման հաշվետվություն 2023 թվականի աշնանը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության մարտահրավերների և կարիքների վերաբերյալ: հղում

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազդակիր համայնքի մասնակցությունը և հաշվետվողականությունը

- Մարդասիրական արձագանքման և զարգացման ծրագրեր իրականացնելիս ակտիվ համագործակցել՝
  - կանանց իրավունքներով զբաղվող,
  - կանանց կողմից ղեկավարվող,
  - փախստականների կողմից ղեկավարվող,
  - հաշմանդամություն ունեցող անձանց,
  - երիտասարդների կողմից ղեկավարվող

կազմակերպությունների հետ: Դա հնարավորություն կընձեռի կանանց, աղջիկների, ինչպես նաև մարգինալացված խմբերի ձայներն արտացոլել տարբեր միջոցներով, ինչպիսիք են խորհրդատվությունը, ծրագրերի համատեղ մշակումը, կարողությունների զարգացումը, ինստիտուցիոնալ ֆինանսավորման աջակցությունը՝ նպաստելու համար տեղական և միջազգային մարդասիրական համակարգման միջավայրում նրանց մասնակցությանն ու առաջնորդությանը:

- Ներդնել դյուրօգտագործելի ինտեգրված տեղեկատվական պաստառներ, թռուցիկներ և թեժ գծեր՝ տարբեր նախապատմություններ ունեցող փախստականների համար նախատեսված պետական ծառայությունների և աջակցության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը կարող է բարելավել այլ կարևոր ծառայությունների հասանելիությունը, ներառյալ քաղաքացիության ստացումը, առողջապահությունը և կրթությունը:

- Տեղեկույթի տարածման և համայնքահեն ծառայությունների մատուցման գործում, որպես մարդասիրական օգնության կարևոր գործընկերների, ակտիվորեն ներգրավել տեղական ՔՀԿ-ներին և փախստականների կողմից ղեկավարվող կազմակերպություններին: Նրանք, մասնավորապես, կարող են ծառայել իբրև կենտրոնական հանգույցներ՝ բաշխելու կանանց, տղամարդկանց, աղջիկներին ու տղաներին հարմարեցված տեղեկատվական փաթեթները՝ ելնելով նրանց գտնվելու վայրից, տարիքից և գենդերային մասնահատուկ կարիքներից: Սա կարող է թեթևացնել կենտրոնացված տեղեկատվության բեռը: Այս ջանքերը կարող են համատեղվել օժանդակության և աջակցության այլ ծառայությունների տրամադրման հետ՝ միաժամանակ առաջարկելով կանանց և աղջիկներին հարմարեցված ապահով տարածքներ:

- Գոյություն ունեցող ծառայությունների և աջակցության համար ապահովել մարդակենտրոն նախագծման հետադարձ կապի մեխանիզմների լայն շրջանակ: Թեժ գծի օպերատորների վերապատրաստումը պետք է ներառի ուղեցույց, թե հարթակում ինչպես կարելի է գտնել անհրաժեշտ տեղեկություն: Անհրաժեշտ են նաև ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն տարբեր ժողովրդագրական խմբերի (օրինակ՝ կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունների, գենդերային բռնություն վերապրածների, թրաֆիքինգ վերապրածների, փաստաթղթեր չունեցողների, տարեցների, գործազուրկների և հաշմանդամություն ունեցող անձանց) հնարավոր հայցադիմումների հասցեագրումը: Բացի այդ, յուրաքանչյուր թիրախային խմբի համար էական և դյուրըմբռնելի տեղեկույթի թղթային տարբերակները կարող են տարածվել նրբանկատորեն ընտրված վայրերում, ուր նրանք հավաքվում կամ հաճախակի այցելում են:

- Տրամադրել բավարար ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ սեռական շահագործումից ու բռնությունից պաշտպանության քաղաքականության, համակարգերի և ընթացակարգերի կիրառումը մարդասիրական արձագանքման ստանդարտ գործառնական ընթացակարգերում ներառելու համար՝ նպատակ ունենալով կանխել, մեղմացնել և արձագանքել սեռական շահագործմանն ու բռնությանը:

- Տարածել փախստականների՝ անվճար մարդասիրական օգնություն ստանալու իրավունքների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություն և խորհրդակցություններ անցկացնել փախստականների հետ՝ համայնքներում բողոքարկման ապահով մեխանիզմներ ստեղծելու համար:

Մարդասիրական արձագանքման ներառականությունը

- Ապահովել և նպաստել ծառայությունների՝ փախստականների բոլոր խմբերին արդար հասանելիությանը: Սա ենթադրում է դրանք հասանելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց, քանի որ կենսական է ներառականության ավելի լայն ընկալումը: Տարբեր խմբերում առկա շփոթմունքը՝ կապված անվճար առողջապահական ծառայությունների, սոցիալական արտոնությունների և աջակցության այլ ձևերի հետ, մատնանշում է, որ անհրաժեշտ է օգտատերերի կողմից հարթակի նախնական փորձարկում՝ հիմնված մարդակենտրոն նախագծման սկզբունքների վրա: Թեև օպերացիոն համակարգը համապատասխանում է իրավական կարգավորումներին, այժմ այն պահանջում է փորձարկում՝ ստուգելու, որ ունի պարզ կառուցվածք և հասկանալի լեզու: Բացի այդ, այն պետք է համապատասխանի ժողովրդագրական տարբեր խմբերի հատուկ հաղորդակցական հմտություններին և նախասիրություններին:

- Իրականացնել, թարմացնել և տարածել գենդերազգայուն ուսումնասիրություններ՝ խորանալով դեռահասների հաղթահարման մեխանիզմների մեջ: Թեև երեխաները չէին մասնակցում ՖԽՔ-ներին, սակայն հավաքագրված տվյալներից ակնհայտ է դառնում, որ պայքարում էին պատերազմի առաջացրած տրավման և սթրեսը հաղթահարելու համար: Բացի այդ, նրանք ունեցել են ինտեգրման դժվարություններ, որոնցից հատկապես ազդվել են դեռահաս աղջիկները: Հատուկ ուշադրություն են պահանջում այն երեխաները, որոնք չեն հաճախում դպրոց, քանի որ այս իրավիճակը կարող է քողարկել վաղ ամուսնության, մանկական աշխատանքի, հավանական հարկադիր աշխատանքի և սեռական թրաֆիքինգի ռիսկերը, որոնք հատկապես վտանգավոր են և՛ տղաների, և՛ աղջիկների դեռահասության տարիքում:

Ոլորտային ծրագրերի մշակում

Պաշտպանություն

- Բոլոր ոլորտներում և նախաձեռնություններում հզորացնել գենդերային բռնության ռիսկի նվազեցման ու կանխարգելման միջոցառումները, այդ թվում՝ շահագրգիռ կողմերի հետ ակտիվ խորհրդակցությունների, փախստականների հետ ուղիղ աշխատողների վերապատրաստումների, ինչպես նաև ԳԲ-ի ռիսկերի վերաբերյալ փախստականների շրջանում և հանրայնորեն իրազեկության բարձրացման միջոցով:

- Փախստականների շրջանում ավելացնել իրազեկության բարձրացման նախաձեռնությունները՝ հարմարեցնելով դրանք իրենց նախընտրած հաղորդակցման ուղիներին՝ կանխելու և արձագանքելու համար ԳԲ-ի դեպքերին: Սա ներառում է նրանց շրջանում ԳԲ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացում, դեպքի մասին հայտնելու հստակ քայլերի հաջորդականության ուղղորդում և տեղեկության տրամադրում այն մասին, թե ինչպես կանայք, աղջիկները, տղամարդիկ ու տղաներն ապահով կերպով օգտվեն համապատասխան ծառայություններից ու ռեսուրսներից: Հանրայնորեն տարածված և հասանելի QR կոդերը պետք է տանեն գենդերային բռնության արձագանքման ծառայություն մատուցողների վեբ-կայքեր և թեժ գծեր:

- Շարունակել ակտիվորեն համագործակցել և ներդրումներ կատարել կանանց իրավունքներով զբաղվող և ԳԲ-ի կանխարգելման ու արձագանքման, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և ԼԳԲՏՔԻ անձանց կարիքները բավարարելու գործում մասնագիտացված կազմակերպությունների հետ: Նրանք պետք է ներգրավվեն նա-

խապատրաստական փուլում և աջակցություն ստանան՝ իրենց տեսանելիությունը բարձրացնելու, իրազեկման կարողություններն ուժեղացնելու և ծառայությունների մատուցումը բարելավելու հարցերում:

- Տղամարդկանց և տղաներին ներառելով՝ անցկացնել միջոցառումներ՝ ուղղված գենդերային փոխակերպող սոցիալական նորմերի փոփոխությանը:

- Ավելացնել փախստական կանանց և աղջիկների համար ապահով տարածքների քանակը՝ որպես մեկնակետ՝ ապահովելու ծառայությունների, տեղեկության և հյուրընկալող համայնքներում սոցիալականացման վրա կենտրոնացած ծրագրերի հասանելիությունը: Ապահով տարածքները կարող են տրամադրել նաև խմբային թերապիայի սեանսներ, իրավաբանական խորհրդատվություն, տեղեկություն սեռական ու վերարտադրողական առողջության ծառայությունների և իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև աջակցություն փաստաթղթերի հարցում:

- Փախստականների, հատկապես կանանց և աղջիկների շրջանում բարձրացնել իրազեկվածությունը թրաֆիքինգի, սեռական շահագործման և բռնության վերաբերյալ:

Կենսապայմաններ

- Գենդերային վերլուծության և զբաղվածության պատկերի, աշխատաշուկայի վերլուծության և տնտեսական գործունեության մեջ փախստականների ներառման արդյունքները ընդգրկել կենսապահովման ծրագրերում գենդերազգայուն գործնական միջամտությունների նախագծման մեջ: Ընտանիքի խնամողի չվճարվող աշխատանքի վրա ծախսած զգալի ժամանակն ի հայտ է եկել՝ որպես կանանց, հատկապես տնային տնտեսությունը ղեկավարող միայնակ կանանց՝ տնտեսական գործունեության մեջ և համայնքային կյանքում ներգրավվելու հիմնական խոչընդոտ: Այնպիսի նախաձեռնությունները, ինչպիսիք են երեխաների խնամքով զբաղվող հաստատությունների ստեղծումը, կարող են մեծապես նպաստել զբաղվածության և ձեռարկատիրության մեջ կանանց ներգրավվածությանը:

- Ստեղծել և/կամ ընդլայնել կանանց տնտեսական հզորացման համապարփակ ծրագրերը/նախագծերը՝ ներառելու փախստական կանանց, հատկապես տնային տնտեսությունը ղեկավարող միայնակ կանանց, բազմաթիվ խնամառուներ ունեցող կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին:

- Փախստականների համար ապահովել աշխատանք փնտրելու անվտանգ ու թափանցիկ ուղիներ և հզորացնել Միասնական սոցիալական ծառայության կարողությունները՝ հասկանալու կանանց, տղամարդկանց, դեռահասների, տարեցների հատուկ կարիքները աշխատանք փնտրելու հարցում:

- Որպես հրատապ առաջնահերթություն՝ լուծել տարեց բնակչության գրանցումների հարցերը, որպեսզի վերջիններս չմնան առանց միջոցների, քանի որ այս խմբի զբաղվածության հնարավորությունները սահմանափակ են: Ապահովել հեռավար գրանցումները՝ տեղական ինքնակառավարման մարմինների կամ ՀԿ-ների միջոցով, ինչը կթեթևացնի երկար հերթերը և համապատասխան գրասենյակներ բազմաթիվ այցերի անհրաժեշտությունը:

- Աջակցել փախստականներին՝ ապահովելու կայուն եկամուտ՝ բնակարան ձեռք բերելու համար: Սա կարող է ներառել հմտությունների ուսուցման ծրագրեր, աշխատանքի տեղավորման ծառայություններ կամ աջակցություն փոքր բիզնես հիմնելու հարցում: Փախստականներին տնտեսապես հզորացնելը կարող է խթանել ինքնաֆինանսավորումը և նպաստել ընդունող համայնքում ավելի լավ ինտեգրմանը:

- Խստորեն կիրառել օրենքը՝ փախստականներին պաշտպանելու բնակարանների վարձակալության շահագործող գործելաոճից, ինչպիսիք են վարձավճարների սաստիկ բարձրացումներն ու անօրինական վտարումները: Կարող են տրամադրվել իրավաբանական աջակցության ծառայու-

թյուններ, որոնք փախստականներին կօգնեն հասկանալ իրենց իրավունքները և կողմնորոշվել բնակարանի վարձակալման պայմանագրերում:

Դրամական օգնություն

- Ձեռնարկել միջոցներ՝ պարզեցված ընթացակարգերով ապահովելու դրամական օգնության ժամանակին բաշխումը՝ ներառյալ ծավալուն հայտաձևերի քանակի և բյուրոկրատական քաշքշուկի կրճատումը:

- Ուժեղացնել դրամական օգնության ծրագրի վերահսկողությունը՝ ապահովելու թափանցիկություն և հաշվետվողականություն: Բարելավել փախստականների հետ հաղորդակցությունը նրանց դրամական օգնության կարգավիճակի վերաբերյալ՝ պարբերաբար տրամադրելով վճարման ժամանակացույցի թարմացումներ և անհապաղ հասցեագրելով ցանկացած մտահոգություն կամ հարցում:

Առողջապահություն

- Ապահովել հստակ և հակիրճ տեղեկատվություն փախստականների համար նախատեսված՝ պետպատվերով և վճարովի առողջապահական ծառայությունների վերաբերյալ՝ նվազեցնելու տեղեկատվական բացերը: Թեև առողջապահական ապահովման ընկալումն ընդհանուր առմամբ դրական է, հաճախ մտահոգություններ են ծագում հաղորդակցության խնդիրների պատճառով, հատկապես առողջության առաջնային պահպանման մակարդակում: Կարևոր է, որ անվճար և վճարովի ծառայությունների, ինչպես նաև դեղորայքի առկայության մասին տեղեկությունը հասանելի լինի բոլորին:

- Ստեղծել թեժ գիծ, որտեղից փախստականները լրացուցիչ պարզաբանումներ կստանան հասանելի ծառայությունների վերաբերյալ:

Հոգեկան առողջություն

- Համագործակցել ՀԿ-ների, այլ կազմակերպությունների և դպրոցների հետ, որոնք ունեն հոգեբանական աջակցություն տրամադրելու փորձ: Տարբեր ենթախմբերի կարիքները բավարարող բազմազան կենտրոնների միջոցով աշխատելը կարող է օգնել փախստական կանանց, տղամարդկանց, աղջիկներին և տղաներին հաղթահարել պատերազմի և տեղահանության ազդեցությունները, ինչպես նաև հարմարվելու դժվարությունները: Ներդնել հոգեբանական ծառայություններից՝ պետության կողմից տրամադրվող վաուչերներով օգտվելու համակարգ:

- Բացահայտել դեռահաս աղջիկների և տղաների հատուկ կարիքները՝ հեշտացնելու նրանց սահուն ինտեգրումը նոր միջավայրում: Անչափ կարևոր է հրատապ ուշադրություն դարձնել երեխաներին և երիտասարդներին, քանի որ հոգեբանական խնդիրները կարող են վնասակար ազդեցություն ունենալ նրանց աճի, զարգացման և երկարաժամկետ բարեկեցության վրա:

- Համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքահեն ՀԿ-ների հետ՝ տարբեր ծրագրերի միջոցով ստեղծելու սոցիալականացման տարածքներ, որոնք կծառայեն սթրեսը, պատկանելության կամ կարգավիճակի կորստի զգացումը թեթևացնելու մեկնակետեր և միևնույն ժամանակ կուղղորդեն դեպի մասնագիտացված աջակցության ծառայություններ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա.
Ֆոկուս-խմբային քննարկումներ

Մասնակիցների՝ ըստ սեռի և մարզի բաշխումը վեր է հանում որոշ շեղումներ հետազոտության նախապես սահմանված մեթոդաբանական փաստաթղթից՝ արձանագրելով կանանց՝ սահմանվածից մեծաքանակ ներգրավում:

Օգտագործվել է ՖԽՔ-ի երեք գործիք՝ յուրաքաչյուրը գենդերային վերլուծության համար սահմանված որոշակի տարիքային խմբի համար: Յուրաքանչյուր գործիք օգտագործվել է առանձին տարիքային խմբի կանանց և տղամարդկանց հետ երեք ՖԽՔ-ների ընթացքում՝ թույլ տալով ընդգրկել թեմաների զգալի մասը:

18-35 տարեկան մասնակիցներ. հաշվի առնելով տարածաշրջանում գենդերային համեմատական վիճակագրությունը և Հայաստանում գենդերային բռնության տարածվածությունը, 18-35 տարիքային խմբին հատուկ տրվել են հարցեր, որոնք ներառում են չորս հիմնական ուղղություններ. **ա)** կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների ապահովության և անվտանգության ուսումնասիրություն, **բ)** մարդասիրական արձագանքներին մասնակցելու և դրանց վրա ազդելու գենդերային կարողությունների գնահատում, **գ)** մարդասիրական արձագանքներին առնչվող առաջարկների և մտահոգությունների բարձրաձայնում, և **դ)** գաղափարների, տեսլականների, կարողությունների ու պատմությունների հավաքագրում, որոնք մասնակից կանայք ու տղամարդիկ կցանկանային բարձրաձայնել, այդ թվում՝ աղջիկների և տղաների անունից:

36-55 տարեկան մասնակիցներ. ենթադրվում էր, որ 36-55 տարիքային խումբը կտրամադրի հեռանկարների բազմազանություն, քանի որ դրա ներկայացուցիչներն այն փուլում են, երբ կամ բավականին կայացած են իրենց աշխատանքի/մասնագիտացման մեջ, կամ վարում են իրենց տնային տնտեսություններն ու ներգրավված են չվարձատրվող աշխատանքում: Այդ հեռանկարները հիմնված են գենդերային փորձի վրա՝ կապված հետևյալի հետ. **ա)** ռեսուրսների հասանելիություն և վերահսկողություն, **բ)** ջրի և սանիտացիայի հասանելիություն, **գ)** առողջա-

ՖԽՔ-ների մասնակիցների թիվը՝ ըստ սեռի, մարզի և տարիքային խմբի





կան խնդիրներ՝ Հայաստան ժամանելուց հետո, և **դ)** տեղահանումից հետո փախստականների առջև ծառացած ֆինանսական խնդիրներ: Եղել է նաև հարցման լրացուցիչ ոլորտ, որի նպատակն էր ուսումնասիրել, թե ինչպես են այս տարիքային խմբի հարցվածները հայթայթում իրենց անհրաժեշտ տեղեկությունը և ինչ ռազմավարություններ են օգտագործում իրենց անհրաժեշտ աջակցությունը ստանալու համար:

56 տարեկան և ավելի բարձր տարիքի մասնակիցներ. 56 տարեկան և ավելի բարձր տարիքի փախստականների հետ ՖԽՔ-ի գործիքը ներառել է չորս հիմնական ուղղություններ. **ա)** ազդեցությունը, որը կրել են կանայք, տղամարդիկ, աղջիկներն ու տղաները տեղահանությունից հետո, **բ)** նրանց դերերն ու պարտականությունները ճգնաժամից առաջ և հետո, **գ)** նրանց կարիքները, ծառայությունների հասանելիությունը կամ հանդիպող խոչընդոտները, և **դ)** հաղթահարման մեխանիզմները, որոնք օգտագործել են տեղահանությունից հետո: Հիմնական ենթադրությունն այն էր, որ ընդլայնված ընտանիքներում, ինչպես հաճախ էր լինում Հայաստան եկածների դեպքում, տարիքով կանայք և տղամարդիկ ավելի շատ ուժ և իշխանություն ունեն, քան երիտասարդ տղամարդիկ ու կանայք: Այդուհանդերձ, քանի որ ավելի շատ իշխանություն ունենալը բազմակողմանի երևույթ է, ենթադրվում էր, որ հիմքում ընկած է երկու առանցքային հանգամանք՝ մեկը բուն տարիքն է[1], մյուսը՝ որդու նախապատվությունը[2]: Ենթադրվում էր, որ այս դինամիկան նրանց ավելի մեծ ազդեցություն կտա ընտանեկան պրակտիկայի ձևավորման գործում:

Յուրաքանչյուր տարիքային խմբի մասնակիցների **միջին տարիքը** տատանվում էր ըստ սեռի և մարզի: Մանրամասները ներկայացված են ստորև բերված նկարում:

Հետազոտությունը նպատակ ուներ թիրախավորելու երկու քաղաքային բնակավայր՝ Երևանը և Կոտայքի մարզում ընտրված մի բնակավայր, մինչդեռ Արարատի մարզն ընտրվել է գյուղական բնակավայրի համար: Այս նպատակադիր բազմազանությունը թույլ է տվել ուսումնասիրել, թե ինչպես են նախկինում քաղաքաբնակ եղածներն այժմ առերեսվում գյուղական վայրերում առկա մարտահրավերներին և հակառակը:

1 Stewart, A. J., J. M. Ostrove and R. Helson. 2001. "Middle Aging in Women: Patterns of Personality Change from the 30s to the 50s." Journal of Adult Development 8 (1), pp. 23–37. հղում

2 Li, L. and X. Wu. 2011. "Gender of Children, Bargaining Power, and Intrahousehold Resource Allocation in China." Journal of Human Resources 46 (2), pp. 295–316. հղում

Նպատակային ընտրանքն օգտագործվել է ՖԽՔ-ների մասնակիցներին սահմանելու և հավաքագրելու համար: Մշակվել են հավաքագրման հատուկ ուղեցույցներ, որպեսզի գնահատումը ներառի հղի և/կամ կերակրող կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և կառավարության տրամադրած բնակարաններում ապրող անձանց՝ ի համեմատ այլ պայմանների:

Էթիկայի սկզբունքների պահպանումն ապահովելու համար ձեռնարկվել են հետևյալ քայլերը.

- Նախքան մասնակցելը՝ հետազոտության մասնակիցներից ստացվել է գրավոր իրազեկված համաձայնություն: Բացատրվել են հետազոտության նպատակը և դրա արդյունքների օգտագործումը, ինչպես նաև՝ թե նրանք ինչպես և ինչու են ընտրվել որպես հարցվող՝ վստահեցնելով, որ մասնակցության ցանկացած պահի կարող են որոշել դադարեցնել պայմանագիրը:
- Անանունությունն ապահովվել է՝ հարցազրուցավարների կատարած բոլոր նշումներից հանելով հարցվողների անունները, ինչպես նաև նրանց նույնականացնելու հնարավորություն տվող ցանկացած տեղեկություն:
- Նրանց բացատրվել է մասնակիցների մասնավոր կյանքը և գաղտնիությունը հարգելու կարևորությունը՝ բացատրելով ՖԽՔ-ների և անհատական կանոնները, որպեսզի մասնակիցներն իրենք որոշեն տեղեկության մակարդակն ու խորությունը, որը պատրաստ են հաղորդել խմբում: Կիրառվել են տվյալների պաշտպանության ընթացակարգեր՝ հավաքագրված տվյալների ապահովությունն ու անվտանգությունը երաշխավորելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. Առանցքային տեղեկատուների ցանկ

Կառույց/Կազմակերպություն
Արարատ համայնք (Արարատի մարզ)
Արարատ համայնքի վարչական շրջան (Արարատի մարզ)
Հրազդան համայնք (Կոտայքի մարզ)
Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
«Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ (Արարատի մարզ)
Կանանց աջակցման կենտրոն (Երևան)
Հզորացման ռեսուրս կենտրոն (Կոտայքի մարզ)
Ծենգավիթի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության միասնական կենտրոն

ՀՂՈՒՄՆԵՐ

ACTED: 2024: Կարիքների արագ գնահատման հաշվետվություն. Հայաստան – փետրվար 2024թ.:

«ԱՌԿԱ» լրատվական գործակալություն: 2024թ. մարտի 25: «Հայաստանի ներքին գործերի նախարար. Լեռնային Ղարաբաղից 1437 փախստական դիմել է քաղաքացիություն ստանալու համար»: հղում

Արմստատ: 2023թ.: Կանայք և տղամարդիկ Հայաստանում 2023թ. հղում

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն: 2020թ.: «Կովկասյան բարոմետր 2019 Հայաստան»: 2024 թվականի ապրիլի 1-ի դրությամբ: հղում

Եվրոպական Միություն: 2021թ.: Երկրի գենդերային նկարագիր. Հայաստան – օգոստոս 2021թ.: հղում

Li, L. and X. Wu. 2011. "Gender of Children, Bargaining Power, and Intrahousehold Resource Allocation in China." Journal of Human Resources 46 (2), pp. 295–316. հղում

Բազմաոլորտային գնահատման հաշվետվություն 2023 թվականի աշնանը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության մարտահրավերների և կարիքների վերաբերյալ: հղում

Stewart, A. J., J. M. Ostrove and R. Helson. 2001. "Middle Aging in Women: Patterns of Personality Change from the 30s to the 50s." Journal of Adult Development 8 (1), pp. 23–37. հղում

ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն: 2024թ.: Հայաստանի գենդերային ահազանգ թիվ 2. Հայաստանում փախստականների ճգնաժամի հաշմանդամության ներառումը և գենդերային դինամիկան – ապրիլ 2024թ.: հղում

ՄԱԲՀ Հայաստան: 2023թ.: ՄԱԲՀ արձագանքը Հայաստանում փախստականների կարիքներին. իրավիճակային հաշվետվություն թիվ 3, 2023թ. նոյեմբերի 1: հղում

2024թ.: Մենք այստեղ ենք. Հայաստանում փախստականների շրջանում գենդերային բռնության որակական արագ գնահատում: հղում

UNFPA and CARE. 2020. "Linking women's economic empowerment, eliminating gender-based violence and enabling sexual and reproductive health and rights." Working paper. հղում

ՄԱԿ ՓԳՀ: 2021թ.: Պաշտպանության մոնիտորինգի հաշվետվություն թիվ 1. Հայաստան (նոյեմբեր-դեկտեմբեր 2020թ.): հղում

2023թ.: Հայաստան. Միջգերատեսչական կարիքների արագ գնահատման հաշվետվություն, հոկտեմբեր 2023թ. հղում

2023թ.: Հայաստանի փախստականների արձագանքման ծրագիր՝ հոկտեմբեր 2023թ.– մարտ 2024թ.: հղում

Այլ աղբյուրներ (չմեջբերված)

Armenpress.am: 2023թ. հուլիսի 27: «Շրջափակված Լեռնային Ղարաբաղում հասարակական տրանսպորտի դադարեցումից հետո վիժումների և մահացած ծննդաբերությունների թիվը տագնապալի տեմպերով աճում է»: հղում

Calderón, V., M. M. Gáfaro Gonzalez and A. M. Ibáñez Londoño. 2011. "Forced Migration, Female Labor Force Participation, and Intra-Household Bargaining: Does Conflict Empower Women?" Documento CEDE 2011-28. հղում

CARE International. 2022. Sudan Rapid Gender Analysis on Power and Participation. հղում

IASC (Inter-Agency Standing Committee). 2021. "IASC Guidance on Strengthening Participation, Representation and Leadership of Local and National Actors in IASC Humanitarian Coordination Mechanisms." 5 July. հղում

ՄՄԿ (Միգրացիայի միջազգային կազմակերպություն): 2023թ.: ՄՄԿ Հայաստանի իրավիճակի թարմացում թիվ 6, 18 հոկտեմբերի 2023թ.: հղում

Kvinna till Kvinna Foundation. 2023. Gendered Impacts of the Lachin Corridor Blockade. հղում

ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն: 2023թ.: Հայաստանի գենդերային ահազանգ թիվ 1. կին ակտիվիստների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ձայները. Հայաստանում փախստականների ճգնաժամի առաջին արձագանքողները – նոյեմբեր 2023թ.: հղում

ՄԱԲՀ Հայաստան: 2016թ.: Տղամարդիկ և գենդերային հավասարությունը Հայաստանում. հաշվետվություն սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերաբերյալ. հղում

Կանանց ռեսուրսային կենտրոն: 2023թ. օգոստոսի 24: «Խախտված վերարտադրողական իրավունքները. շարունակվող մարդասիրական ճգնաժամի ազդեցությունը կանանց վերարտադրողական իրավունքների վրա Լեռնային Ղարաբաղում»:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե.

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին. հղում

Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023թ.: հղում

care

UN WOMEN